

ՕՐԱԳՐՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԱՍՏԻԱՐԿՈՒԹԵԱՆ

1862

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԳՆԱՅՔ.

ԱՄՍԱԳԻՐ 8.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

	Եր.
ՄԱՐԳԱՐԷ ԿՆՈՋ ԱՆԷՆԴԸ. Ս. Նազարեանց.	57 — 90
ԹԷ ԻՆՉՊԷՍ Է ՑԱՒԱԶԱՏԻՄՈՒԹԻՒՆԸ ԿԱԹՈԼԻԿԱՆ ԲԵՖՕՐՄԻ ԻՏԱԼԻԱՑԻ ՄԷՋ. Թարգ. Ֆրանսիականից. Ս. Նազարեանց.	91 — 103
ԲԱՐՈՑԱԿԱՆՔ. Ս. Նազարեանց.	104

ՓԱՐԻԶ,

ВЪ ТИПОГРАФІИ ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ.

1862.

ՕԳՈՍՏՈՍ 1862 ԹՈՒԱԿԱՆԻ·

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ·

ՄԱՐԳԱՐԻՒ ԿՏՈՒՋ ԱՆԷԾՔԸ·

ՅՕԴՈՒԱԾ ԱՈՒԱՋԻՆ·

ԲԱՂԴԱՒՈՐ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ·

Ե՛ն պարզ կապուտակ երկնքի վերայ, որոյ կամարակապի տակ զետեղած է Գրանսիայի առաւել գեղեցիկ գաւառներից մինը, Պրօվանսը, Տիրոջ Թուականին 1708, մի քաղցր գարնանային օր գուշակելով, վսեմ փառաւորութեամբ բարձրանում էր առաւօտու արևը և ոսկեզօծում պատուհանքը մի բարձր ամրոցի որ դրած էր մի ձորի մուտքում: սորա միջով մի առու արծաթի օձի պէս գեղեցիկ գալարուածներով յառաջ էր խաղում, որոյ փայլողութիւնը կացուցանում էր սիրուն ներհակութիւն մարգագետիններու զմրուխտեան կանաչութեան հետ:

Ո՛անապարհորդը, առաջին անգամ, գարնան կամ ամառան միջոցին ոտք կոխելով այս ձորի մէջ և կարս ածատիրոջ սիրուն տունը, մի հարիւրամեայ անտառից շրջապատած, տեսանելով, ակամայ ծնանում էր նորա մէջ այն քաղցր մտածութիւնը, թէ այս ամրոցի մէջ պիտի բնակէին երջանիկ մարդիկ, որովհետև ասես թէ մի մշտնջենաւոր խաղաղութիւն իջրև մի անտեսանելի հոգի շրջում էր այս շրջակայ դաշտերի և անդերի վերայ և օրհնում էր նորանց:

Եւ այս մտածութիւնը համեմատ էր ճշմարտութեանը։

Այդ ամրոցի մէջ շատ տարիներ բնակուէր մի գերդաստան, այնպիսի կատարեալ երջանկութիւն վայելելով, որպիսի երկնային շնորհը սովոր է միայն պարգեւել սակաւ մահկանացուների։ Բայց այս քաղցր երջանկութեան բարիքը վայելուէր ոչ թէ միայն կալուածատէր Բարօն Օրսանժը իւր ամուսնակցի և զաւակների հետ միասին, այլև դուցա մասնակից էին ամրոցի ծառայքը, շինականքը որ իտակ, գեղեցկաշէն տների մէջ, Բարօնի ընդարձակ կալուածում ապրում էին. պատճառ, Օրսանժը էր մի մեղմ, քաղցրասիրտ և արդար տէր, մի հայր իւր հպատակների։ Իւր նախահարցից ժառանգութեամբ ստացած հարստութեան առատութիւնից մասնաւորում նա ամենեցուն, որ ճշմարտապէս կարօտ էին օգնութեան, և երբէք իւր ականջը փակել չէր ընդդէմ մի անբաղդի խնդրուածքի։

Մի՞ թէ մի այդպիսի մարդ, որ իւր ճշմարիտ աղնուամտութեամբ կայուցանում էր մի սակաւագիւտ բացառութիւն իւր կարգի մարդերի առաւել մեծ մասնից, չպիտի պատուելի ու սիրելի լինէր ամենեցուն որ աւելի մօտ ծանօթ էին նորան։

Այո՛, Բարօն Օրսանժը չունէր ոչ մի թշնամի, կամ գոնեայ հաւատում էր թէ չունի։

Ո՜հ, այս հաւատը այնքան գեղեցիկ է, այնքան քաղցր մարդու սրտին. դա շինում է արդէն այս անկատար երկիրը երկնքի նախագաւիթ. դա թափում է մեր կեանքի վերայ վարդակարմիր փայլողութիւնը ուրախութեան և պարգեւում է մեզ մի հնչ խաղաղական ժամ մահու։ Թէև այս հաւատը մի մոլորութիւն է, այնու ամենայնիւ մահկանացուն, որ գտանելում է դորա մէջ, պիտի ցանկար երբէք չդաստանալ այդ մոլորութենից։

Յիրաւի, և Բարօն Օրսանժը կրում էր իւր մէջ այս ցանկութիւնը, որ, եթէ հաճոյ կը լինէր Աստուծոն Թողել նորան իւր ընտանիքը, մինչև ի գերեզման երաշխաւորում նորան մի անպղտոր բաղդաւորութիւն։

Բայց բաղդաւորին ատում են աստուածները, ինչպէս ուսուցանում է մեզ հին Յունաց առասպելաբանութիւնը, ըստ որում կամին նորա բոլոր բաղդաւորութիւնը ինքեանք միայն ունենալ։ Եւ Բարօն Օրսանժը պիտի փորձէր իւր վերայ այս ճշմարտութիւնը, այս զարհուրելի դատաւճիռը. պատճառ, օձը որ ջանահնար էր կործանել նորա դրախտը, այս արևային առաւօտուն վաղ բունաւորուել էր արդէն նորա ամրոցի այգու մուտքի մօտ և թուլս էր նստել կորուսանելու նորան և նորա ընտանիքը։

Մի տղամարդ միջին տարիների հասակում նստած էր դալարահողից շինած հանգստարանի վերայ, շատ մօտ տակաւ իսկած բարձր պատգարապատին, որոյ վերայ Օրսանժի ազգատոհմի նշանը շողշողում էր խայտաճամուկ, սիրուն գուներով։ Այս տղամարդի հագուստը, թէև թաւշի (բարխըտի) գոյները խաւրացած էին, և ոսկեղէն ասղնագործութիւնը այս տեղ

ու այն տեղ երևումէր պատառուած, այնու ամենայնիւ ցուցանումէր նորա պատուի աստիճանը։ Բայց ևս առաւել նորա նրբաձև գծագրութիւնքը եւ բնսի և աչեիւ կազմուածքը նորա մարմնի ակնարկումէին դէպ ի նորա քաջատոհմութիւնը։

Այս տղամարդը — թող մեք այս տեղ իսկզն ասենք նորա անունը, Մարկիզ դ'Օրմոնդը, իւր աչքը դարձուցել էր ամրոցի այս րոպէին արևից այնքան փառաւորապէս լուսաւորուած պատուհանների վերայ։ Նախանձ ու կատաղութիւն նկարվումէին նորա գունաթափ, մի անապատ կեանքի հետքեր կրող, երեսի վերայ, և նորա աչքը արձակումէր ատելութեան խայթիչ հայեացք դէպ ի վերին օթևանքը տան։

«Տակաւին քնած է նա», շշնջեց նա կծելով շրթունքը։ Ա՛հ, քաղցր է նորան հանգստանալ հարստութեան հեշտացուցիչ մահճի մէջ իւր գեղեցիկ կնոջ կողքին, որ ես մի օր սիրումէի խելագարութեամբ չափ։ Անէծք նորա վերայ, երկպատիկ անէծք։ Եթէ նա եկած չլինէր, և իւր, բաղդի պարգևներով օրհնած փեսայութիւնը չառաջարկէր նորան, այնուհետև լինելու էր այդ կինը իւր բոլոր ճոխ ժառանգութեամբ իմ ամուսնակիցը, և ես այսօր չէի ընկած լինելու իրրև մուրացկան նորա դրան առաջև, իմ կին ու զաւակով ապրելով այն ողորմութենից որ նա մնարդասիրութեամբ հաստուցանումէ ինձ։ Ո՜հ, քանի՛ անգամ արդէն ես անիծել եմ այդ շնորհը։ Բայց ես ստիպուած էի ընդունել զորան, ազատուելու իմ պարտատերց ձեռքից, որ պիտի արտաքսէին ինձ իմ ժառանգական ամրոցից, որոյ վերայ ոչ մի քար ինձ պատկանում չէ այլ ևս։ Եւ ես պարտական չեմ նորան ոչ ինչ շնորհակալութիւն նորա վեհանձնութեան համար։ Նա, իմ արենակից աղգականն է, նա ինքը ձգել է ինձ թշուառութեան անդունդքի մէջ։ Եթէ Խլարելլան լինէր իմ կինս, ես չէի կապելու այն ամուսնութեան գաշը, որոյ մէջ ես չգտայ ոչ սէր, ոչ բաղդաւորութիւն։ Ես յուսահատութենից անձնատուր լինելու չէի խաղի դևին և կարտերը և տատրինքը չէին կողոպտելու իմ բոլոր գոյքը։ Ես կարող էի ապրել այնպէս փառաւոր, ինչպէս նա. ես կարող էի նմանապէս երջանիկ լինել։ Բայց այս բոլորը պիտի փոխուի։ Ամեն փորձ կը փորձեմ ես. մինչև այժմ խաղացել եմ կարտ ու տատրինք, այժմ կամիմ մի խաղ սկսանել, որ կամ կ'առաջնորդէ ինձ դէպ ի պլհատման բարձրաբերձ անդակը կամ թէ կը պատրաստէ ինձ մի անցամաքելի հարըստութեան աղբիւր։ Եւ նա ինքը պիտի տայ ինձ հնարները հասանելու այդ նպատակին։ Ես այդ բարեսիրտ տիմարին արդէն շատ անգամ խաբել եմ, և այժմ կը յաջողուի ինձ այդ բանը»։

Հազիւ Մարկիզ դ'Օրմոնդը այս վատթար, կիսաձայն, ընթանից դուրս բերած խորհուրդքը առարտել էր, և ահա ամրոցի առաջակողմեան պատուհանի մէջ լսելի եղաւ մի շառաչիւն։ Նախ բացուեցաւ ամրոցի բարձր դարպասը և ապա պատուհանը, մի ալևոր ծառայի ձեռքով։

«Հաղթաւորները քնից զարթել են», ասաց դ'Օրմոնդը։ «Օրը այնքան գեղեցիկ է։ Իմ աղգականս, այս ժամուս սովորութիւն ունի իւր գերդաստանի հետ ցած իջանելու դէպ ի պղծին։ Թո՛ղ այս տեղ սպասենք նորան»։

Նորա ձայնը մի քաղցր ժամ յետոյ կատարուեցաւ։

Մրոցի երկրիզղկեան դուռը բացուեցաւ և շէնքի վերայ երևեցաւ բարձր Օրսանժը իւր գերդաստանով։

Նարոնը էր արդէն մի տղամարդ վաթսնամեայ հասակում։ բայց դեռ ևս մուգ մազեր ծփումէին նորա քունքի վերայ և նորա հոյակապ կերպարանքը տակաւին անթեքելի էր։ Նորա երեսը կրումէր առաջին գեղեցկութեան հետքը։ Նորա բարձր ճակատի վերայ դրած էր հանճար և արժանապատուութիւն, նորա պայծառ աչքերի միջից նայումէր մի անտարակուսելի բարեսրտութիւն։ Նորա ամուսնակիցը հաղիւ թէ ունէր նորա հասակի կիսաչափը։ Նա էր մի հեզ, հրապուրիչ կին, որ մի ժամանակ ընտրել էր իւր փեսայ, վերապատուելով միայն, պարոն Օրսանժին, որ նորա հանգուցեալ հօր բարեկամն էր։ Բայց պատուից ու յարգանքից դէպ ի այդ ազնիւ տղամարդը, շատ շուտով դուրս էր ծլել քնքուշ մոերիմ սիրոյ ծաղիկը, և նա դառնալով մայր երկու զաւակների, համարումէր իւր կեանքի վիճակը Բարօնի կողքին, այնպէս երջանիկ, որպիսի միայն կարող էր հասանել նորան երկրիս վերայ։

Ընդրանիկ զաւակը, Բէատրիս անուն, երեսով էր կատարեալ նմանատիպը իւր հօր։ Բնութիւնը ընծայել էր նորան հօր մուգ օղամազերը, նորա վայլուն աչքերը, և բարձր ճակատը։ Ազօլիքը, ուր ատրճանակը մանուկ որդին կրումէր մօր երեսի կակուղ, քնքուշ գծագրութիւնքը։ Երկոքին իսկ կարող էին սպասաւորել իրրև օրինակ մի քերոքէի և սերոքէի։

Նարօն Օրսանժը, իւր սիրելիներից շրջապատուած, կամաց ցած էր իջանում սանդուղներից դէպ ի պղծին։ Բէատրիսը կրումէր ձեռնումը մի սակառ. նա երթումէր հօր կողքից։ Ազօլիքը բռնած ունէր իւր մանուկ գեղեցիկ մօր ձեռը։

Այս էր մի գեղեցիկ ընտանեկան պատկեր որ այժմ մերկացաւ Մարկիզ դ'Օրմոնդի առաջև, որ այդտ մէջ, դրան մօտ, մտել էր մի թափ քամակ և զբօսնող գերդաստանին նայումէր ծածուկ, տեսլութեան ուշադիր աչքով։

Յանկարծ դուրս եկաւ նա և հանդէպ գնաց Բարօնին։

«Իշողութիւն, պատուելի ազգական, որ ես համարձակվումեմ այսպէս կանուխ անհանգիստ առնել Ձեզ» ասաց նա կեղծաւոր ցածութեամբ (խոնարհութեամբ)։

Նարօն Օրսանժի քաղցր երեսը մի փոքր պղտորուեցաւ, երբ որ նկատեց Մարկիզին։

«Ա՛յդարև» պատասխանեց նա, ես կարծում չէի պղպէս շուտով դարձեալ տեսանել Ձեզ իմ մօտ։

«Ես համարձակուելու չէի, եթէ չիմանայի, որ Բարօն Օրսանժի մեծահոգութիւնը անսպառելի է, ինչպէս երկնքի ողորմասրտութիւնը»։

«Այդ, այնքան անսպառելի չէ իմ գոյքը, սիրելի ազգական»։

«Ա՛յս անգամն չեմ խնդրում ոչինչ իմ համար. բայց ես ունիմ կին ու զաւակներ։ Դուքս պիտի սուվամնէ լինին, եթէ օգնութիւն չբերէի նոցա»։

Բարօնը տհաճ հիացքով նայեց իւր աղգականի վերայ։

«Այրանից մի ամիս յառաջ ուղարկեցի Ձեզ մի նշանաւոր արծաթ» ասաց նա. «Ցանն հաղար ֆրանկ այն պայմանով, որ դուք հատուցանէիք ձեր առաւել սոխալող պարտատէարցը։ Արի՞ էք Դուք այս բանը. լցուցի՞ էք Ձեր երդումը»։

Ա՛յն — այն դժոխային գևը հրապուրեց ինձ .քակտել այդ երդումը, թոթովեց դ'Օրմօնդը։

«Ով Հշտառական, դարձեալ խաղացել ես Դու»։

«Ա՛յո՛»։

«Եւ բոլորը կորուսել ես»։

«Խոլորը։ Ա՛յժմ մուրացկան եմ ես. պատճառ, էգուց դատաւորքը կը խլեն ինձանից իմ վերջին պատսպարանը, իմ նախնիքի ժառանգական ամրոցը։ Ես, մարկիզ մարդ, կնոջով ու զաւակով, պիտի... ով, Աստուած իմ. սա մի մտածութիւն է, որ ձգում ինձ խելագարութեան մէջ»։

Օրմօնդը բռնցի զարկեց ճակատին և նորա աչքերը վայրենի կերպով պտտվում էին շուրջ գալով։

«Խարօն Օրսանժ» ձայն տուեց նա սաստկութեամբ, «օգնեցէք ինձ դարձեալ միանգամ, այս վերջին անգամն։ Եթէ կը մերժէք ինձ, ապա ձգեցու էք ինձ անձնասպանութեան մէջ»։

«Ա՛րդ դու», ասաց Օրսանժը զայրացած, «կարծո՞ւմես դու պղպիսի սպառնալիքով դուրս հանել ինձանից մի բան։ Քանի՛ տարի է ահա, որ ես ցուցել եմ քեզ ներողամտութիւն և կարեկցութիւն։ Պիտո՞ի էր ինձ հաշուել ու համարել քեզ, ինչ որ ես այսքան երկար ղոհել եմ քո վատնողութեանը և քո խաղամոլութեանը։ Ամէն քան թէ՛ հարիւր հազար ֆրանկ ժամանակ առ ժամանակ հատուցել եմ քեզ։ Վ՛հայ է Աստուած, որ ես իմ յատուկ զաւակներս պիտի զրկէի, եթէ կամենայի նոր ի նորոյ —»

Ա՛յս տեղ բարօն Օրսանժի ամուսնակիցը կտրեց նորա խօսքը։

Յուսահատութիւնը այն տղամարդի որոյ սէրը մի օր մերժել էր այդ կինը, արտասուք դուրս ճնշեց նորա աչքից։ Պաղատագին ինդրից կինը բարօնից, խօսելով այսպէս.

«Ա՛տածի՛ր պարոն Օրմօնդի ամուսնակիցը, նորա զաւակները. Մի՛ թէ այս անմեղները պիտի պատժուին իւրեանց հօր յանցանքի փոխարէն։

Օդներ, իմ բարեկամ, օդներ եթէ կարող ես։ Նայիր Իէատրիսի և Ադօլֆի վերայ։ Մինաք արա, եթէ մեք այդպիսի զարհուրելի կերպով զըկուէինք քեզանից, ինչպէս մեր ազգականը սպառնացել է թէ կամէր կարճել իւր կեանքը։ Տես ահա, երեխայքն ևս լաց են լինում, ինչպէս ես. և նոքա պատզամին խնդրումեն կարեկցութիւն անբաղդներին»։

Ու արդարև երկու փոքրիկ երեխայքն ևս լռնել էին ձեռնները կցած և նայումէին հօր վերայ, առ ի սրտէ խնդրելով։

Ո՛նչպէս կարող էր աղնիւ տղամարդը ընդդիմանալ իւր ամուսնակցի սրտաշարժ խօսքերին, իւր նազելի երեխաների անբարբառ և այնու ամենայնիւ այնքան ճարտարախօս կերպարանքին։

Կ՚ա մտածեց մի քանի րոպէ, ապա ասաց դէպ ի իւր սիրելին.

«Մոռ այժմ գնանք այցելու թիւն առնելու Հիւանդ այրի կնոջ, Մատթիասին, մխիթարութիւն ու զօրութիւն մատուցանելու նորան։ Բայց այս անգամն գնացէք դուք միայն։ Ես պիտի խօսեմ առանձին պարան Օրմընդի հետ»։

Բարօնի երեսի վերայ կարդումէր կինը նոր օգնութիւնը նորա ազգականի անպաղդ գերդաստանին։ Ա՛յս պատճառով աւելորդ էր որ և իցէ խօսք։ Նա զրկախառնեց իւր ամուսին այրը, համբուրեցին նորան և երեխայքը, այնուհետև հեռացաւ նա սոցա հետ միասին, ուղղելով գնացքը ձորի մէջ, որ տանումէր դէպ ի Հիւանդ Մատթիաս կնոջ խուղը։

Երբ որ Բարօնը միայնակ էր Օրմընդի հետ միասին, խնդրեց նորանից, հետևել իւրեան դէպ ի ամրոցը։

Հասանելով իւր սենեկի մէջ, առաջարկեց նորան մի նստարան, նըստաւ և ինքը նորա հանդէպ և սկսաւ խօսել ծանրաբարոյ ոճով.

«Ընկենակիցդ իմ Օրմընդ, լսեցէք ինձ հանդարտութեամբ թէ որպէս եմ որոշել ես ձեր գերդաստանի մասին։ Ես կամիմ նորան ընդունել իմ տունս. ձեր ամուսնակիցը մնաղ լինի իմ կնոջ սիրելի քոյրերապատիւ բնութեամբ. ձեր երեխայքը կը ստանան իւրեանց կոչմանը արժանի դաստիարակութիւն»։

«Ո՛հ. շնորհակալութիւն, շնորհակալութիւն, ով ամենաղնիւ մարդ»։

«Մի կտրեցէք խօսքս, մինչև աւարտեմ ասելիքս։ Ձեր համար յատկապէս կարող չեմ ոչինչ առնել, բայց միայն տալ ձեղ հարկաւոր արծաթը ճանապարհորդելու դէպ ի Փարիզ։ Գիտեմ, դուք վաղուց ունիք այն տեղ զօրաւոր բարեկամներ արքունական պալատում. դիմեցէք խնդրութեամբ նոցա մօտ, Դուք տակաւին գտանելումեք ամենազեղեցիկ այրական տարիների մէջ. դուք ունիք հանճար և տեղեկութիւնք։ Ա՛յն տեղ ձեր համար հիշատանելու էր մի կայսրութիւն, մի պաշտօն, որոյ մէջ կարող էք ձեր աջողակութիւնքը պիտանի կացուցանել։ Ա՛յն տեղ հրաժարուեցէք ձեր անկարգ գնացքից, փախեցէք կարտերից և սատրինջից, պատուաւորութեամբ

յառաջ գնացէք ձեր նոր ասպարէզի մէջ, այնուհետեւ կարող էք պատրաստել ձեզ բաղդաւոր ապագայք եւ ձեր ծերութիւնը կը լինի տակաւին ուրախալից»։

«Պատուական, ազնիւ արենակից» ձայն տուեց Մարկիզը, «Ձեր խօսքերը բաղդատութիւն գուշակող մարգարէի խօսքեր են»։

«Ուրեմն դուք ընդունում էք իմ առաջարկութիւնը»։

«Ո՛վ ձեռք ձգելու չէր մի այդպիսի փառաւոր փրկութեան խարսխի։ Ա՛յ, այո՛, ես բարեաւ մնա եմ ասում բոլոր յիմարութիւններին որ քարուքանդ են արել իմ տունը։ Թո՛ղ չորանայ այս ձեռը, եթէ միւսանգամ վեր կալնուր կարտերը։ Ա՛յ, ես երդւում եմ—»

«Դադարիր, իսկոյն ձայն տուեց Օրսանժը. ես չեմ պահանջում ոչինչ երդումն։ Եթէ մի տղամարդ ձեր տարիներում, մի ասպետ, չէր լինելու հաստատ իւր լոկ խոստման վերայ, ապա քակտելու էր ամենայն երդումն։ Տուեցէք ինձ երաշխաւոր ձեր ձեռը, որ կամէք հետեւիլ իմ խրատին։ Այս բաւական է»։

Օրմծնդը իսկոյն ձեռը դրեց իւր ազգականի ձեռի մէջ. ապա լմընեց նորան եւ կամեր սեղմել իւր շրթունքին։

«Ինձ տուել են այդպիսի նուաստութիւնքը», ասաց Օրսանժը, իւր աջը հետ քաշելով։ «Բայց եթէ մի օր լսեմ, որ դուք ձեր անցած օրերի կեղտ անունը սրբել էք, երբ հասել էր րոպէն, որ կարող էի պարծենալ իմ տոհմակցութեամբս ձեր հետ, այնուհետեւ կը դրկախառնեմ Ձեզ իրրեւ եղբայր։ Մինչեւ այն ժամանակը հեռի կը մնանք միմեանցից։ Շտապեցէք այժմ տուն եւ յայտնեցէք ձեր ամուսնակցին, որ շատ պատուելի է ինձ, իմ եւ ձեր խորհուրդը»։

Նարօնը վեր կացաւ իւր նստարանից, ակնարկելով որ խօսակցութիւնը աւարտած էր։

Օրմծնդը խորին ակնածութեամբ խոնարհեցրեց գլուխը բարեգութ տղամարդի առաջեւ եւ ապա ուղղեց քայլերը դէպ ի դուռը. բայց այս տեղից կրկին վերադարձաւ նա, մի այլ խնդրուածք առնելու Բարօնից։

«Այս երեկոյեան իսկ, իմ գերդաստանս տեղափոխ կը լինի ձեր տունը, ճշմարիտ բաղդաւորութեան տաճարը», ասաց նա։ «Բայց թոյլ տուեցէք ինձ եւս, երեք օրով մնալ այս տեղ։ Ես կարող չեմ այնպէս շուտով բաժանուիլ իմ կնոջից, իմ զաւակներից։ Չորրորդ օրը, արեւաբացին կը հեծնեմ ձիու վերայ, հանդէպ գնալու իմ կեանքի նոր վիճակին։ Ո՛չ, անտես մի արէք այս խնդիրս, իմ ազգական. սա իմ վերջին խնդիրս է»։

Նարօն Օրսանժը մի քանի րոպէ միտք արեց։ Նա ոչինչ պատճառ չուներ մերժելու իւր ղջացող ազգականի խնդիրը։ Ա՛յնու ամենայնիւ այս րոպէիս ղղջոց նորա սիրտը մի սարսափեցուցիչ ղգացողութիւն։ Եթէ նա

կարողացած լինէր բառերով բացայայտել այդ զգացողութիւնը, այդ բառերը լինելու էին պայպէս.

«Տուր այդ մարդուն այնքան ոսկի, որքան կամի։ Բայց հեռի պահիր նորա ոտքը քո տան սուրբ շէմքից։ Նա մի դև է, որ թուխս է նստել քո կորսի վերայ, և նորա հետ միասին ձախորդութիւնը կը մտանէ քո տունը»։

Բայց մտածելով թէ մի փոքր կոշտ էր լինելու, այն մարդուն որ պիտի երկար ժամանակով բաժանուէր իւր ընտանիքից, չնորհել այս բաղդատութիւնը, մի քանի օր տակաւին անցուցանել նոցա հետ, ստիպուեցաւ պատասխանել.

«Հաստ լաւ, իմ աղգական. և այդ խնդիրը յօժար եմ կատարել։ Ես չնորհումեմ ձեզ իմ հիւրասիրութիւնս, մինչև կարող էիք ճանապարհ ընկնել։

Մի սարդոնական (ստիպական) ժպտումն խաղաց պարոն Օրմնդի շրթունքի չորս կողմը։ Նա հասել էր իւր սրտի փափագին։

«Դուք այդ ձեր խօսքերով պահեցիք ձեր վերհանձնութիւնը։ Երկինքը թող մի օր չնորհէ ինձ, որ ես կարողանամ արժանապէս հատուցանել Ձեզ»։

Խարօնը որ իւր աղգականի օտարոտի (խորթ) ժպտումը չէր նկատել, արձակեց նորան մի անկօս հրաժարական ողջունով։

Պարոն Օրմնդը շուտով դարձաւ դէպ ի իւր արդէն կիսաւեր ամրոցը, որ իրրև երկու ժամի ճանապարհ հեռաւորութեամբ գրած էր իւր հարուստ աղգականի կալուածից։

Տակաւին նոյն իսկ օրը, արևմտից փոքր ինչ յառաջ տեղափոխուեցաւ նա իւր ամուսնակցի և երկու զաւակների հետ Օրսանժի ամրոցը։

Խարօնուհին, որ երկար ժամանակ տեսած չէր Օրմնդ տիկինը, տեսանելով նորան, արտասուեց իսկոյն. պատճառ, այդ կնոջ գունաթափ երեսի վերայ նստել էր մի խորին վիշտ։ Երկու երեխայքը, մի արու մանուկ, Գուստաֆ անուն, գրեթէ Թէատրիսի հասակակից, և մի փոքրիկ խարտեաշ գանդրահեր աղջիկ, Ֆելիսիտէ անուն որ յոյս էր տալիս թէ մի օր գառնալու էր գերօրինակ գեղեցիկ, ասես թէ զգայակից էին իւրեանց մեր աղէտքին. պատճառ, և նորա գունաթափ էին և ցուցանում էին տխուր կերպարանք։

Տիկին Օրմնդը և նորա երեխայքը հանդիպեցան մի քաղցր սիրողաբար ընդունելութեան։ Օրսանժը շուտով հոգաբարձու էր եղել տալ պատրաստել նոցա համար մի քանի բարեկիր սենեակներ որ հեռի չէին իւր գերդաստանի սենեակներից. այլև հոգալ դոցա բոլոր հարկաւոր յարմարութիւնքը, այո՛ զարդարել դորանց գեղեցկութեան առարկաներով որ Օրմնդեանց առաջին բնակարանը վաղուց արդէն ցուցանում չէր աւելի։ Պարոն Օրմնդին, նորա կարճատև կացութեան համար տրուեցաւ մի սենեակ որ

անմիջապէս կից էր ամրոցի տիրոջ մասենադարանին։ Այս տեղ բաղմահմուտ Օրսանժը սովորութիւն ունէր ամենայն օր անցուցանել մի քանի ժամ։ Այս սենեակը նուիրած էր մուղաներին. այս տեղ դրած էր մի մեծ գրասեղան որոյ պահարանների մէջ կային շատ տետրակներ և արձակ թերթեր, որոց բովանդակութիւնը շինական կեանքի պարապ ժամերում հաւատացել էր իւր սրտի ամենասիրելի զգացողութիւնը և իւր մտքի ամենալաւ խորհուրդները։ Նոցա կինը շատ սակաւ ոտք էր կոխում այդ սենեկի մէջ, երեխայքը գրեթէ երբեմն չէին այն տեղ. պատճառ, այն ժամերում, երբ Օրսանժը, ինչպէս յաճախ ասում էր կատակօրէն, սովոր էր խորասոյզ լինել ինքն իւր մէջ, սիրում էր միայնակ լինել, որ կարողանար իւր մտածութիւնքը անխռով դուրս ըղխել իւր հոգուց։ Եւ որովհետև չկամէր նա իւր հիւրի ներկայութիւնը այն տեղ, այս պատճառով դուրը, որ բացվում էր դէպ ի ընդերակայ սենեակը, փակել էր, քանի որ դեռ ևս եկած չէր Օրմննդի գերդաստանը, և բանալին առել էր իւր մօտ։

Տիկին Օրմննդը և Նորա երեխայքը առաջին երեկոն իւրեանց կացութեան Օրսանժի ամրոցում մնացին նոյնպէս արտում, որպէս ներս էին մտած այն տեղ։ Այն մտածութիւնը թէ պիտոյ էր այսուհետև ապրել մի հարուստ աղգականի շնորհից, ճնշում էր սիրտը աղնիւ կնոջ որ միանգամ ըստրել էր իւր ամուսին տղամարդին մի ճոխ բաժինք, բայց դա իւր ամուսնութեան առաջին տարիներում վատնած էր Նորա ձեռով։ Բայց երբ որ այս կինը միւս առաւօտուն միայն էր իւր սենեկում և Նորա բարձր պատուհաններից դէպ ի ցած նայեց մեծ կանաչավայրի վերայ որ տան քամակում կից կացուցանումէր մի բոլորակ, և տեսաւ իւր երեխայքը պարոն Օրսանժի երեխաների հետ միասին ուրախ խաղի մէջ այս կողմ ու այն կողմ թռչտելով, այո և լսեց նոցա խնդագին ձայնարկութիւնը, այնուհետև դադարեցաւ Նորա սրտի ալեկոծութիւնը, որպիսի եղած էր անցեալ երեկոյին, և նա կամաց խօսումէր ինքն իւր հետ այսպէս.

«Մնէպէտ և իմ կեանքիս մէջ այսուհետև լինելու էին ուրախ ժամեր սակաւ միայն, իմ երեխայքս գոնեայ, այս մեծերիմ գերդաստանի մէջ ողջ ու բաւական կը լինին։ Եւ այս իսկ, վերջին օրերումը էր միշտ իմ սրտի կաթոտգին փափագը։ Այս տեղ, այլ ևս չեն լսելու նոքա իւրեանց հօր խաղընկերների անոպայ կատաղութիւնը. այլ ևս չեն տեսանելու նոքա իւրեանց հայրը վայրենի արբեցութեան մէջ գրեթէ գազան դարձած, ահ տալով իւրեանց մօրը թէ ոտնակոխ կ'առնէը նորան։ Նոցա սիրտը չէ թունաւորուելու. Նորա ծաղկիկը կը բացուի մնքուր ու գեղեցիկ։ Ո՛հ, աստուած իմ, մտածելով այս բաներս, գրեթէ պատրաստ էի օրհնել այն ժամը, երբ արտաքսուեցանք մեք մեր սեփականութենից և յանձնեցինք մեր անձը պարոն Օրսանժի մեծահոգութեանը։ Այո՛, այո՛, այս տեղ բաղդաւոր կը լինին իմ սիրելի զաւակները։

Վոքը ինչ յետոյ եկաւ Բարօնուհին առ Օրմենդ տիկինը և տարաւ նորան ղբօսանք առնելու ամրոցի պտգումը։ Նորան իրրև քոյր գրկախառնեց աղնիւ տիկինը և ասաց նորան սիրելի բարեկամուհի։ Ա՛յս մտերիմ ողջունատուութիւնը շատ քաղցր եղաւ սորա սրտին. պատճառ, իւր անցած կեանքի վերջին տարիներում սակաւ էր ունեցել նա կենակցութիւն կանանց հետ։ Իւր ամուսին տղամարդի բարեկամները ասածքը, որ օգնական էին եղած նորան, իւր գոյքը խաղով տանել տալու և վատնելու, էին ամուրի (չկարգուած) աղնուականք շրջակայ սահմանից։

Երբ որ երկոքին տիկնայքը կուռը կռան տուած եկան պտգին և հասան երեխաների խաղատեղին, սոքա դադարեցան խաղալուց և խնդութեան ձայն արձակելով վազեցին իւրեանց մօրերին հանդէպ։

«Սիրելի մայր», ասաց Գուստաֆը Օրմենդ կնոջը. «Վաղուց ես պատմէին ուրախ եղած չէի, ինչպէս այս առաւօտուս։ Թէատրիսը մի հրեշտակ է։ Նա արդէն եղբայր է ասել ինձ, այլև փոքրիկ Ադոլֆը է մի քաղցր մանուկ։ Ա՛յս տեղ շատ ուրախ կը լինինք մեք, եթէ դու ևս, սիրելի մայրիկ, կամէիր ուրախ լինել։

Այդպէս խօսեց Օրսանժ տիկնոջ դուստր Թէատրիսը դէպ ի իւր մայրը։ Նա մի պատուական մանուկ ասաց Գուստաֆին, որպ հետ կամեր անտառի մէջ պտուղք որոնել և ծաւաստանի վերջումը եղած լճակի մէջ շրջել նաւակով։

Երեխայքը թէ օրքան շատով սիրելի էին դարձել միմեանց, երևեցաւ նորանով, որ նոքա, երբ համբուրել էին իւրեանց մայրերը, դարձեալ մօտեցան միմեանց և փայփայելով իրեար, փաթաթեցին ձեռները միմեանց վզին։

Օրսանժ տիկինը վեր կալաւ իւր բարեկամուհու ձեռը և ասաց ժպտմամբ ակնարկելով դէպ ի Գելիսիտէն և Ադոլֆը.

«Երեխայքը տալիս են մեզ մի պատուական օրինակ։ Ինչպէս նոքա մարմնաբար գրկախառնել են միմեանց, նոյնպէս առնենք և մեք մեր սրտումը, որչափ ժամանակ կը շնորհէ մեզ բաղդը տպրել միասին։

Ինչ երկոքին կանայքը իւրեանց երեխաների հետ միասին ղբօսնումէին անտառի միջով դէպ ի փոքրիկ լճակը որ ունէր մի անտուղր քաղցր դիրք, Բարօնը գտանվումէր իւր մտաենադարանի նախասենեկի մէջ. որովհետև հասել էր այն ժամը որ նա սովոր էր նուիրել ուսումնասիրութեան և ներքին զննութեան։

Նա նստաւ բարձր հնաժամանակեայ գրասեղանի առաջև, դուրս հանեց մի մեծ տետրակ որի մէջ կային արդէն գրած թերթեր շատ, բայց և մնում էին տակաւին նոյնքան ևս դատարկ թերթեր։ Ա՛յս մի մտաենագրական գործ էր, որի վերայ Բարօնը շատ տարիներ աշխատումէր, բայց նա այդ գործը սահմանել չէր հրապարակելու. պատճառ, դորա մէջ ամփոփել էր իւր

կարծիքը Թագաւորութեան վերայ որ այն միջոցին բռնակալաբար տիրումէր Ֆրանսիայի մէջ, և եկեղեցու վերայ որոյ քահանայքը վաղուց վերջացեալ էին լինել արժանաւոր սպասաւորք Տիրոջ։ Որովհետև Բարօնի հասկացողութիւնը, հնութեան ազգերի ուսումնասիրութեամբ լուսաւորուած, այլև կարգալով ամենալաւ քաղաքական գրուածքը որ այն միջոցին դուրս էին եւ-ռևած Անգլիայում, որ և նա կարողացել էր ճարել իւր համար, իւր հա-յեացքի և գաղափարների մէջ մի դար աւելի յառաջ էր գնացել քան թէ իւր բոլոր աստիճանակից մարդիկը։ այս պատճառով այդ գրուածը, եթէ հրապարակուէր, կարող էր վտանգաւոր լինել նորան։ Նա կամէր այս գրո-ւածը իւր մահուց յետոյ հնչած թողուլ իւր որդուն, որ և պիտի բացէր նո-րան յետոյ միայն, այն օրերում, երբ լուսոյ և ճշմարտութեան հոգին յաղ-թող եղած կը լինէր խաւարի ստուերներին։

Բարօնը մի քանի ժամանակ գլուխը տուած ձեռին, մտածումէր. ա-պա վեր կալաւ գրիչը և սկսաւ գրել։ Նա կարծումէր, թէ ոչ օրի աչք հըս-կում էջ Նորա վերայ. բայց սխալ էր այդ կարծիքը։ Այն դրան, որ մտեւ-նաղարանից բացվումէր դէպ ի մծտակայ սենեակը ուր քնակումէր պարոն Օրմօնդը, այդ դրան բանալու մեծ ծակի վերայ դրած էր մի սև սուր աչք, որ գննելով նայումէր մտեննադարանի ներսը և դէպ ի Բարօնը։ Հաղիւ թէ հարկաւոր էր ասել, թէ այդ աչքը պատկանումէր այն մարդուն որոյ վեր-պաստանը փրկել էր Բարօնը թշուառութեան անդունդքից։

ԳՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ։

ՕՁԸ ԴՐԱԽՏԻ ՄԷՋ։

Ինչպէս որ դիպուածը շատ անգամ ձեռնտու է բարի մարդերին, նոյն-պէս ևս ձեռնտու է չարերին։ Պարոն Օրմօնդը, որ, իւր ազգականի ամրոցի մէջ տեղափոխուելուց յառաջ, արդէն յղացել էր սրտի մէջ այն լիակատար խորհուրդը որ էր, իւր կենսական կացութիւնը բարեկարգել Բարօն Օրսան-ժին կործանելով ժամանակաւոր կորստի մէջ — Օրմօնդը այժմ գովաբանու-մեր բաղդը որ նորան բերել էր այս սենեկի մէջ։

«Այսուհետև պէտք չէր ինձ սողալու ծածուկ ճանապարհներով» ա-սումէր նա, ինքն իւրեան, «և երկիւղի մէջ լինելու, մի գուցե յայտնուէր գործը։ Այս գուռը կարելի էր բանալ։ Այո, ես ունիմ այն գործիքը որ հրա-մայեցի խլել գողի ձեռքից, որ երկու տարի յառաջ բռնուեցաւ, երբ բա-ցումէր իմ սենեակը, ուր դրած էր իմ արծաթի արկղը։ Այդ գործիքը մեծ այժմ պիտանի դառնան ինձ»։

Մի ժամ յետոյ թողնեց նա ամրոցը և վերադարձաւ միայն, երբ երե-կոյի մութը կոխել էր։

Երեկոյեան սեղանը սպասուեր արդէն հիւրին։ Բայց նախ քան թէ գնացին սեղան վայելելու, ասաց Օրմնդը Օրսանեանին.

«Ես այսօր արդէն կիսով չափ վճարեցի գործը իմ պարտատերոց հետ։ Ինչ որ դեռ ես մնում է, կը վերջանայ մօտակայ օրերում։ Ես Թողում եմ նոցա կամքին իմ նախնիքական ամրոցը և իմ հողակալուածքը։ Թուղ պղ անգղները [1]) բաժանեն իւրեանց մէջ կողոպուտը։ Իմ անձս շատ սակաւ արժէք ունէր նոցա աչքում։ Այս պատճառով նոքա ոչինչ բանտարկութեան հրաման ընդդէմ իմ դուրս հանելու չեն, և ես կարող եմ անխափան ճանապարհորդել դէպ ի Փարիզ, որ Աստուծոյ ողորմութեամբ ոտք դնեմ մի նոր պատուաւոր աստիճանի մէջ։ Ո՜հ, երկար ժամանակ է, որ ես այսպէս աղատ շունչ առած չէի, որ ես իմ սիրտը զգացել չէի այնպէս վըստահ, ինչպէս այսօր։ Մի աղնիւ տղամարդ յանձն է առել հոգալարձու լինել իմ ընտանիքին որպէս իւր սեփականին։ Ես տեսանում եմ նոցա ուրախ հայեացքից, որ նոքա այս տեղ զգում են իւրեանց անձը բաղդաւոր։ Այս մի գերօրինակ մխիթարութիւն է. դա կ'առաջնորդէ ինձ իմ ճանապարհի վերայ, և ես մտածելով, թէ իմ ընտանիքը յետ եմ թողում այս տեղ, քաջութեամբ կը համբերեմ մի ըղկանքի որ պուտէ տևելու էր տարիներ։

Մեծ ծառան որ սպասաւորում էր սեղանին, կանչեց դէպ ի երեկոյեան հացկերութիւն։ Երկրին գերդաստանքը գնացին կերակրատունը. բազմեցան վայելելու սեղանը որ պատրաստած էր չափաւոր, բայց համեղ կերակուրներով։ Ամուսնակից կանայքը նստան միմեանց մօտ, երեխայքը խառն կարգով միասին։

Հացկերութենից յառաջ, բարձրացաւ տեղից Օրսանէ տիկինը և ասաց մի պարզ սեղանական աղօթք, որից ընդումէր առ ի սրտէ շնորհակալութեան հոգի։ Պարոն Օրսանէը, թէպետև չէր պատկանում Փրանսիայի ծածուկ Հուգենօտներին, հաւատական բաների մէջ գրել էր իւր համար այսպիսի կանոն, թէ շնորհակալութիւն Աստուծուց և սէր դէպ ի ամենայն մարդիկ, այո՛ և դէպ ի մեղրեաքը, աւելի բարձր է քան թէ որ և իցէ դաւանութիւն։ Նա իւր անկեղծ երկիւղածութեամբ, իւր և ամուսնակցի օրինակով ներգործուեր իւր երեխաների և ստորադրեալների սրտի վերայ։ Նա սիրուեր աղօթքը, երբ որ դա իբրև մի սուրբ կրակ ելանուեր սրտից և ոչ թէ միայն լեզուն էր իբրև պղինձ որ հնչումէ, կամ իբրև ծնծղայ, որ ղօղանջումէ։

Աւօտակցութիւնը սեղանի վերայ Բարօնի հոգաբարձութեամբ հնարի պահուելով ամենայն ակնարկութենից դէպ ի իւր աղդականի տխուր անցած օրերը, ստացաւ մի մեղմ ուրախութեան ընթացք։ Հացկերութեան վերջումը բաժակներ խմեցան, մաղթելով պարոն Օրմնդին բաղդաւոր գալըջը։

---

[1]) Դորա կորակուսց յաւիտեակող թռչուններ են. տաճկերէն ասումն դոցա ադպադա։

Արեկոյեան հացկերոյթենից մի ժամ յետոյ երկոքին կանայքը տա-
րան իւրեանց երեխայքը հանգստացնելու։ Մի սենեկի մէջ դրած էին երկու
աղջիկների մահճակալքը, նորա հետ կից սենեկի մէջ երկու տղաների մահ-
ճակալքը միմեանց մօտ։ Դուռը երկու սենեակների մէջ բաց էր. ուրեմն
երեխայքը մինչև նոցա քունը տանելը կարող էին քաղցրութեամբ զբուցել
միմեանց հետ, և զարթնելու միջոցին իսկոյն ողջունել միմեանց, որոյ վերայ
ամենեքեան զմայլուած էին։

Նրբը որ Օրսանժ և Օրմնդ տիկնայքը իւրեանց երեխայքը համբուրել
ու օրհնել էին, մի քանի րոպէ տակաւին մնացին նոքա մտերմաբար խօսա-
կցելով միմեանց հետ։ Եւ երբ որ նոքա, ամրոցի ժամացոյցը զարկելով տասն
և մի ժամը, բաժանվելու էին միմեանցից, Օրմնդ տիկինը շընչեց Բարսնու-
հու ականջին, թէ խաղաղութիւն է գտել իր հոգին այն րոպէից, երբ ոտք
էր կոխել այս տան շէմքի վերայ, և նա յոյս ունէր այնքան շատ, խռովալից
գիշերներից յետոյ, դարձեալ միանգամ մեղմ քնով հանգստանալ իւր բազ-
դատոր փոքրիկների մօտակայքում։

Ընց կացաւ մի ժամ ևս, այնուհետև քուն եղան և ծառայքը և մի
խորին լռութիւն տիրեց ամրոցին։

Եւ պարոն Օրմնդը, սպասաւորութեամբ սենեկային ծառայի որ Բա-
րսնը դրել էր նորա հրամանի տակ, հանեց վերայի հանդերձը և հանգստա-
ցաւ։ Բայց նա քնած չէր և չկամէր քնել. պատճառ, այս գիշերիս արդէն
պիտի լցուցանուէր նորա դիտաւորութեան մի մասը։ Ճրագը որ վառվռէր
մի արծաթի ճրագակալի վերայ, չէր հանգցրել նա և ծառայի հեռանալուց
յետոյ, որ շուտով վառէ մի փոքրիկ գողալապտեր, որ ծածուկ բերել էր իւր
հետ։ Ա՛յս լապտերը դրեց մի անկիւնում և ծածկեց նորան իւր գդակով։
Ապա նեմմացաւ ճրագը — և խաւար ու լռութիւն պատեց նորա չորս կողմը։

Վիշերային պահուն, ինչպէս ասում էի մի հին զրոյց, չար հոգիքը ու-
նեն շատ մեծ կարողութիւն այն մարդերի վերայ որ հրաժարուել են պատ-
ուի և արդարութեան ճանապարհից։ Մատնութեան, ագահութեան, պատ-
ուասիրութեան դևերը պաշարեցին պարոն Օրմնդի մահիճը և ձայն տուե-
ցին նորա ականջի մէջ.

«Յամր մնտենում ահա, երբ դու կարող էիր ոտք դնել Հարստու-
թեան և պատուի առաջին աստիճանի վերայ։ Հաստատ կացիր քո դիտա-
ւորութեան վերայ։ Խղճմտանքը է միայն ահաւոր պատկեր անպատշտ ամ-
բոխի համար։ Ով որ հաւատում չէ ոչինչ Աստուած, նա չունի տիղիք և
վախենալու նորանից։ Քաջալերուիր. խորամանկը և վստահը վերջապէս պի-
տի ձեռք բերէ յաղթութիւնը»։

Եւ պարոն Օրմնդը ականջ էր դնում այս ձայնին որ կարծում էր թէ
լսում դուրսից, թէպէտ դա ստուգապէս դուրս էր լղկում իւր յատուկ հո-
գուց. նա ուշադիր էր դորան իրրև մի մարգարէի բարդատոր գուշակութիւն-

ների, և կծկած ձեռը դրեց կուրծքի վերայ, որպէս թէ կամէր լռեցնել իւր սրտի բարձրաձայն զարկողութիւնքը։

Յամը զարկեց տասն և մի. այնուհետև կամաց վեր կացաւ նա իւր մահճից և հագաւ մի գիշերային հանդերձ որ Բարօնի ծառան դրել էր այն տեղ։ Ապա դուրս բերից լապտերը անկիւնից, երբ որ յառաջուց զգուշութեամբ ականջ էր դրել իւր ննջարանի դրան մօտ որ բացվումէր դէպ ի մութ ճեմելիքը, դուրս հանեց իւր հանդերձի գրպանից մի փոքրիկ երկաթի օղ, որոյ վերայ կախած էին կեղ գործիքք շատ, և փորձ փորձեց, ինչքան կարելի էր, կամաց և մեղմով բանալ փականքը դրան որ նորա սենեակը բաժանումէր մատենադարանից։ Բայց երկար տևեց, մինչև նա կարողացաւ վճարել գործը. պատճառ, նորա ձեռքը, թէև շատ անգամ արդէն անիրաւութեամբ խառնել էին կարտերը, սակայն երբէք մանակից եղած չէին գողերի գործին, և նորա այս գիշեր դողումէին այն յանցաւոր գործի մէջ։

Վերջապէս հասաւ նա իւր նպատակին. փականքը դուրս պրծաւ։ Նա բացեց դուռը, որ իւր կրունկների վերայ հետեւեց, որպէս թէ նոյն իսկ անզգայ երկաթը դուրս էր արձակում մի ցաւի ձայն այն գործի վերայ, որ պարոն Օրմոնդը յանձն էր առել ընդդէմ իւր աղնիւ ազգականին։

Այս ձայնարկու թիւնը լռեցրեց նորա սիրտը. մի սարսափ դղրդեց նորա մարմինը։ Երևումէր նորան, որպէս թէ մի անտեսանելի ձեռն պարզվումէր նորա ընդդէմ և խթումէր նորան դէպ ի յետ։ Բայց վերոյիշեալ դէպերը կանգնած էին նորա քամակում և դրդումէին նորան դէպ ի յառաջ, ծաղր առնելով նորա վատթար երկիւղոտութեանը։

Այսպէս, դողդողուն ոտներով ներս մտաւ նա մատենադարանի սենեակի մէջ։

Ակիզբը արած էր, այժմ պիտի յառաջ գնար նա։

Մի այլ փոքրիկ դողահնար գործիքով բացեց Օրմոնդը և Բարօնի պրասեղանի պահարանը։ Երկար ժամանակ վեր ի վայր խառնեց թղթերը։ Մի անկիւնում, միւս թղթերի մէջ զգուշութեամբ թաքուցած, գտաւ նա Բարօնի շարագրածը, որ յիշեցինք մեր առաջին յօդուածում։ Նախ կարդաց նա դորա մակագիրը. ապա նստաւ պրասեղանի մօտ և գողալապտերի լուսատուութեամբ ծանօթացաւ նորա բովանդակութեանը։ Քանի որ յառաջ էր խաղում կարդալով, նոյնքան և մի նենգաւոր ժպտումն տարածվումէր նորա ներս ընկած դէմքի կերպարանքի վերայ։

«Հրաշալի՜ բաղդ» շշնջեց նա. «այս մի պատուական գիւտ է։ Գրեթէ ամեն մի շարքից կարելի էր նիւթ առնուլ քրէական յանցանքի ամբաստանութեան։ Այս ինչ բան է, աղգականդ իմ. դու ապաքէն հոգով դարանագործ ես դէպ ի սուրբ Լուդովիկոսի թոռը, դէպ ի թագաւորը Աստուծոյ ողորմութեամբ։ Թող գրուածը մնայ այս տեղ, մինչև կը գայ րոպէն, երբ նա կը լցուցանէ իւր պաշտօնը, և ինչպէս յոյս ունիմ, լաւ պաշտօն»։

Ելա դարձեալ դրեց տետրակը իւր տեղում և որոնումեր այս տեղ ու այն տեղ այլ թուղթեր։ Մի փոքրիկ պահարանի մէջ գտաւ նա մի կապոց միասին դրած նամակների։ Նա արձակեց կապը և կարդաց շատերը նոցանից։ Դոցա առաւել մեծ մասը գրած էր վաղ ժամանակից, երբ Բարոն Օրսանժը տակաւին կէս մի ապրումեր պալատումը, և կէս մի նորին մեծութեան, Լուդովիկոս տասն և չորսերորդի զօրքումը պատերազմումեր Ֆրանսիայի համար։ Այն միջոցում Բարոնը ունեցել էր շատ բարեկամներ և նոցա հետ տեղական նամակագրութիւն։ Այդպիսի նամակներ շատ գտաւ Օրմննդը. տհաճութեամբ ձգեց նորանց դէպ ի մի կողմ։ Ապա նորա աչքը ընկաւ մի աղնուականի ստորագրութեան վերայ, որ քսան տարի յառաջ իրեւ Հուգենօտ մասնակից էր եղել մի դարանագործութեան ընդդէմ թագաւորին, երբ որ Նանտէսեան հրովարտակը Լուդովիկոս տասն և չորսերորդի ձեռով վերացուած էր և արիւնոտ հալածանքը սկսուած էր ընդդէմ Պրոտեստանտանց։ Այս աղնուականը, մի պարոն, Մօնտրօնժ անուն, մի նամակի մէջ իւր շնորհակալութիւնը յայտնումեր Օրսանժին, ըստ որում սա մի քանի ժամանակ պատսպարել էր նորան իւր մօտ և յետոյ փախստեան պատեհ էր ճարել նորա համար։

«Պէտք է թէ Բարոնը այս դեղնացած նամակները դարձեալ կարդալու էր ծայր ի ծայր» ասաց Օրմննդը. «Ուրեմն նա զգալու չէր Հուգենօտի դրուածի պակասութիւնը»։

Ելա շուտով թաքցրեց այս նամակը ծոցի մէջ և որոնումեր այլ գաղտնիք, բայց ոչինչ չգտաւ, որ օգտակար լինէր իւր նպատակին։ Վերջապէս վեր կացաւ նա մի թուղթ որոյ վերայ Պարոն Օրսանժը գրել էր մի բան։ Այդ թուղթը պարունակումեր համառօտ ծանօթութիւնք երկրաւոր կեանքի լռմանգակութեան և արժանաւորութեան վերայ։ Բարոնը ուներ մատքուր և պարզ ձեռք։ Այս համառօտ ծանօթութիւնքը գրած էին մանուանդ գեղեցիկ գրչով և այս պատճառով հաճոյ էին պարոն Օրմննդին։

Երբ որ նա դարձեալ կարգի էր դրել բոլոր թուղթերը պինպէս, որ Բարոնը կարող չէր կասկածանք առնուլ, թէ մի օտար ձեռք մտն էր եկել դոցա մէջ, վերստին փակեց գրասեղանը, նոյնպէս և դուռը և վերադարձաւ դէպ իւր ննջարանը։

Բայց ամբարիշտները այնպէս շուտով հանգիստ գտանել կարող չեն, ինչպէս արդարամիտքը։ Արդէն բացվումեր առաւօտը արևելքում, երբ որ պարոն Օրմննդը ընկաւ նիրհման մէջ որ հիւսած էր տանջողական, սարսափելացուցիչ երազներով։

Վաղոց օրի ինն ժամուն, գնաց նա, ինչպէս ասումեր, վերջին անգամը դէպ ի իւր առաջին կալուածը որ այժմ յանձնած էր նորա պատասխանատուին և երրորդ օրին դարձեալ երևեցաւ Օրսանժի ամրոցում։

Երբ որ գիշերը վաղուց արդէն ցած էր իջել երկրի վերայ և ամենքեան ամրոցումը գնացել էին քնելու, միւսանգամ բացեց նա մատենադարանի սենեակը և Բարօնի դրասեղանը։ Համառօտ գրուածքը դարձեալ ըրուեցան իւրեանց տեղում, բայց Հուգենօտ աղնուականի նամակը յետ պահեց նա իւր մօտ։ Նա հաստատապէս կարծումէր, թէ Բարօնը գժուար թէ շուտով զգալու էր դորա պակասութիւնը։ Սորանից յետոյ դուրս հանեց նա դրպանից մի մեծ թուղթ, մի քանի րոպէով վեր կալաւ առաջակողմեան գրքերը որ դրած էին վաղաժամանակեայ տախտակաշէնքի վերայ, կոխեց թուղթը հին մեծամեծերի գրքերի երկրորդ կարգի մէջ, այնպէս որ դուրսից հեշտ կարելի չէր տեսանել նորան, և ապա դարձեալ դրեց գրքերը իւրեանց առաջին տեղում։

«Այժմ ամենայն բան կատարեալ է», շշնջեց նա։ «Եթէ այսուհետև իմ քաջ դաշնաւորը, սատանան, չմոռաւ ինձ միայն, շուտով կը լինիմ ես տէր այս ամրոցի, այս դաշտերի և անտառների վերայ։

Վաղուց առաւօտուն պատրաստուեցաւ ճանապարհ ընկնելու դէպ ի մայրաքաղաքը։

Բարօնը յանձնեց նորան բաւական մեծաքանակ արծաթ որ տալիս էր նորան կարողութիւն իւր տուհին արժանաւոր կերպով երևելու պալատումը և, եթէ հարկաւոր էր, մի ամբողջ տարի ապրելու և առանց պաշտօնի, այլ և ընծայեց նորան իւր պատուական հեծանելի ձիանքից մինը և հրաժարուեցաւ նորանից, ուխտելով նորան իւր բարեացակամութիւնը, եթէ կամէր նա այս անգամս հաւատարիմ մնալ իւր խոստմանը։

Լսարդաս ազգականի աչքից դուրս իջնելուն կեղծաւոր արտասուք, երբ որ նա գրկախառնեց աղնիւ տղամարդը. նորա բերանից թափուեցան միանջենաւոր շնորհակալութեան և անձնանուիրութեան նոր երդումներ, նոյն դութը ցոյց տուից նա դէպ ի Բարօնուհին և դէպ ի իւր ամուսինը։

«Դու շատ նեղութիւնք ես կրել իմ պատճառով, իմ սիրելի Կըլոթիլդէ» ասաց նա իւր ամուսնուն, համբուրելով նորա արտասուախառն աչքերը, «բայց յոյս ունիմ ես, հատուցանել մի մասը այն ծանր պարտքի, որ բեռնաւորում իմ սիրտը»։

Ապա համբուրեց նա և Գուստաֆը և Ֆելիսիտէն, և ակնարկելով դէպ ի Օրսանժը յաւելացրեց.

«Այս տղամարդը կը լինի ձեզ հայր, մինչև մեք վերստին կը տեսանենք միմեանց։ Աստուծուց յետոյ, պարտական էք դուք նորան և նորա ամուսնուն ամենամեծ ակնածութիւն և սէր»։

Ապա փոքրիկ Ագոլֆ Օրսանժեանին ձգեց նա իւր գիրկը, փայփայեց նորան և կամէր նոյնպէս հրաժարական համբոյր տալ տասերկու տարեկան Բէատրիսին, Բարօնի աղջկան։

Բայց սա, երբ որ Օրմննդը բռնեց նորա ձեռը և թեքեց երեսը համբուրելու նորան, գունաթափուեցաւ և սկսաւ սաստիկ դողալ։ Մի ընդդիմադիկ տհաճութիւն որ նորա մէջ գոյացել էր դէպ ի այս մարդը, ստիպեց նորան արագութեամբ խլել իւր ձեռքը սորանից։ Նա վախաւ դէպ ի յետնակողմեան մասը այգու և այնքան երկար չերևեցաւ իւր ծնողների և Օրմննդ տիկնոջ առաջև, մինչև անլսելի դարձան սմբակազարկերը ձիու որ վերայ հեծել էր իւր գերդաստանի չար հրեշտակը։

Երբ որ այդ աղջիկը վախկոտութեամբ դարձեալ դուրս սողաց, մայրը առաւ նորան դէպ ի մի կողմ և յանդիմանեց նորան վասն նորա անպատշաճ ընթացքին դէպ ի պարոն Օրմննդը։

Բայց Ռէատրիսը փաթաթուեցաւ նորա վզին և խնդրուեր.

«Մողութիւն, սիրելի՛ մայր, ինձ անկարելի էր համբուրել այն մարդը, որ այնքան անգութ և անիրաւ է գտանուել դէպ ի տիկին Օրմննդը։ Սորան կամիմ ես սիրել և համբուրել, սորան և սորա զաւակների վերայ կամիմ ես աղօթել, բայց պարոն Օրմննդը ազդումէ իմ մէջ սարսափ ու զարհուրանք։ Ես ուրախ իմ, որ նա հեռացել է այս տեղից և կը ցանկանայի, որ այլ ևս չտեսանէի նորան երբէք»։

Երեք ամիս անցան բաղդաւոր գերդաստանի համար անխռով խաղաղութեան մէջ։ Թէպէտ Օրմննդ տիկնոջ գունատ թուշերը չկարմրեցան դարձեալ — տրտում՝ անցած օրերը յաւիտեան տերևաթափ էին արել նաղելի վարդերը — սակայն նա կարողացաւ դարձեալ ժպտիլ քաղցրութեամբ, նայելով երեխաներին որ միասին և ուրախ խաղումէին միասին, այլև նախանձաւորութեամբ մանուկից էին այն դասատուութեանը Բարօնի մանուկներին, որ լցուցանումէր դրացի սահմանի ալևոր արժանապատիւ աբբան։

Երկրորդ ամսի վերջումը եկել էր մի նամակ պարոն Օրմննդից իւր կնոջ և Բարօն Օրսանժի վերայ։ Նամակը ծանուցանումէր, թէ Օրմննդը մի պարոնի մէջ, որ մեծ պատիւ ու կշիռ ունէր պալատումը և որին նա իւր ամուսնութենից յառաջ բարեկամ էր ասել, գտել է մի պաշտպան. սա յանձնել էր նորան Մենթենօն տիկնոջը, Լուդովիկոսի ամուսնուն, և այս երկիւղած, աստուածավախ կնոջ շնորհով ստացել էր արդէն մի պալատական պաշտօն, որ մի քանի տարի յետոյ կարողութիւն կը տար նորան, իւր ամուսինը և զաւակները բերել տալու դէպ ի Վերսայլ և պատրաստելու նոցա մի ապահով կեցութիւն։ Բայց թէ ի՛նչ պալատական պաշտօնի մէջ կարգուած էր նա, այդ ասած չէր նամակի մէջ։ Մինչև կը լինէր այս, նա յանձնումէր իւր ընտանիքը իւր վեհանձն աղգականի հովանաւորութեանը, կըրկին և դարձեալ գովասանելով նորան իբրև իւր կեանքի փրկիչ հրեշտակը։

Տիկին Օրմննդի աչքերը թրջուեցան արտասուքով, այս տողերի ընթերցանութեան միջոցին։ Նա իւր երեխաների հետ միասին ծունր խոնարհեցրեց և մեղմ ու ջերմեռանդ աղօթքով գոհացաւ երկնային տնօրէնութենից,

որ իւր ամուսին տղամարդի սիրտը իւր առատ ողորմութեամբ գարձուցել էր դէպ ի բարին։

Խարօնը և նորա ամուսնակիցը առ ի սրտէ մասնակից էին նոցա ուրախութեանը։

Խարօնուհին ասաց իւր տղամարդին.

«Տեսանո՞ւմես, իմ բարեկամ, մի բարի ժամ էր, երբ որ դու պարոն Օրմենդին գարձեալ օգնեցիր։ Նա գարձել է մի նոր, մի աւելի լաւ մարդ և քո բարեգործութիւնքը օրհնութիւն կը բերեն քեզ»։

Պարզամիտ Բարօնը մասնակից էր իւր ամուսնու կարծիքին. այդ պատճառով տհաճութեամբ կնջռեց ճակատը, երբ նորա տասերկու տարեկան դուստր Բէատրիսը, որ ներկայ էր իւր ծնողների խօսակցութեանը, ասաց.

«Ես չեմ հաւատում թէ պարոն Օրմենդը լաւ մարդ էր գարձել, հայր իմ։ Թէ ինչու, չգիտեմ ես. բայց մի ձայն խօսում է իմ մէջ։ Այդ մարդը մեղ կեղծաւորում միայն սէր, և մեք գարձեալ ունինք գորանից մի ակնկալէլ չար բան»։

Նոյն ինքն նախանձմունքը գրել էր այս դուշակութիւնը անմեղ երեխայի սրտի մէջ։ Աւա՜ղ, այս երկիւղը շատ շուտով պիտի արդարանար անպատմելի ահաւորապէս։

Գոտոս ամնի կէսն էր. ամառնային օրը եղած էր գեղեցիկ և մեղմ և մի պայծառ, տաք երեկոյ յաջորդել էր փառաւոր օրին։ Ամէն ձորի վերայ, որոյ մէջ գտանվում էր Բարօն Օրսանժի կալուածը, կամար էր կապել մուգ կապտագոյն, փայլատակող աստղներով և պայծառ լուսնի փայլողութեամբ զարդարած երկինքը, իբրև մի մեծ հովանաւոր ծածկոց։ Բարօնը իւր ընտանիքով որոց պատկանում էր այժմ և Օրմենդ տիկինը և նորա երեխայքը, կանգնած էր մի ծաղկաբլրի վերայ իւր ամրոցի այգումը։ Այդ տեղ ամենքեան կերել էին երեկոյեան հացը և մի փոքր յառաջ վեր էին կացել սեղանից։

«Ո՛վ իմ Աստուած, ասաց Բարօնը, իւր հայեացքը վերուղղելով դէպ ի աստեղազարդ երկինքը». ինչպէս անպատմելի փառաւոր է քո աշխարհը։ Ի՛նչպէս երջանիկ է նա, որին ընորհել ես դու քո առատ ողորմութեամբ, բնութեան գեղեցկութիւնը, օրհնութիւնը անհոգ վայելել խաղաղ հանգարտութեան մէջ։ Դու պարգևել ես ինձ այդ բարութիւնը։ Եթէ դու չունաճ լինէիր ինձ շատ ազգերի իշխան, այո՛ իմ սիրելի Ֆրանսիայի թագաւոր, ես կարող չէի առաւել լիակատար սրտով գոհանալ քեզանից, քան թէ այս րոպէիս, երբ, թէև լինելով վաթանամեայ, վայելումեմ մի ամուր առողջութիւն, իմ գերդաստանս քնքշութեամբ սիրումէ ինձ և իմ հպատակքը օրհնումեն ինձ որպէս իւ բնանց հայր։ Ո՜հ, Թո՛ղ տևէ այս վիճակը, մինչև իմ աչքերս մահու մէջ կը փակուէին, բայց մի տուր ինձ տակաւին շուտով մեռանել։ Քո աշխարհը այնքան փառաւոր տաճար է քո սիրոյ, որ

ես չկամէի մեռանել աւելի վաղ, քան թէ բնութիւնը որոշել էր ինձ իմ կեանքի վերջին սահմանը»։

Այս խօսքերը Բարօնի բերանից դուրս եկած, և ահա նորա ալեւոր ծառան, Մկրտիչ անուն, ամրոցի կողմից վազելով գալիս է դէպ ի բլուրը։ Ծերունին դողումէր յայտնապէս և նորա բերանը կարողացաւ միայն թո-թովել այս բառերս.

«Ողորմած պարոն — ո՜հ արարիչդ իմ — ես ունիմ Ձեզ ծանուցանե-լու — ծանուցանելու —»

Լեզուն պապանձուեցաւ և նա որոնումէր շունչ։

Կանայքը ահաւիւեռուած սասանեցան և ձայն տուեցին.

«Ո՜հ, բոլոր սուրբեր դուք»։ Ձախորդութիւն է պատահել։

«Երկնաւոր Հայրը մի արասցէ», ասաց իսկոյն Բարօնը։

Նա բռնեց իւր ալեւոր ծառայի ձեռը և կրկնեց.

«Հանգստացիր, ով բարի Մկրտիչ, քաջալերուիր։ Այդ ինչ բան է, որ իմ խոհական ծեր Մկրտիչն վերայ այդպիսի ահ ու դող է բերում։

«Ո՜հ, իմ ողորմած պարոն, թողուցէք ալեւորը». մեծ բազմութիւն մարդերի գտանվում ամրոցի դարպասի առաջև, որ ահա փակել եմ ես»։

«Ես որպիսի մարդիկ, իմ ալեւոր դու։ Հաւատում եմ, որ դրբա ոչ աւազակներ և ոչ տուն պրող մարդիկ էին»։

«Ոչ, տէր իմ Բարօն — դրբա են — դրբա են զինուորներ»։

Բարօնը զարմացած յետ քարշուեցաւ։ Կանայքը շուարուած նայու-մէին միմեանց վերայ։

«Զինուորնե՞ր» հարցրեց բարօն Օրսանժը։ «Ցեսո՞ղ ես դու օրինա-ւոր կերպով»։

«Դրբա կրումեն զինուորական հագուստ։ Ես տեսայ նոցա զէնքը շող-շողելով լուսնի փայլողութեան տակ»։

«Ես ինչ են խնդրում նոքա»։

«Նրբա պահանջումեն Թագաւորի անունով, որ ներս թողնէին, և ահ են տալիս, դուռը բռնութեամբ խորտակել, եթէ իսկոյն չբանայի նոցա»։

Օրսանժ տիկինը դողալով ընկաւ իւր ամուսին տղամարդի կուրծքի վերայ։

«Ի սէր Աստուծոյ, բարեկամ իմ, ինչ խորհուրդ պիտի ունենար այս գիշերային այցելութիւնը։ Երևումէ, որպէս թէ կամէին քեզ —»

Կինը չկամեցաւ դուրս հանել բերանից բառս «բանտարկել»։ Բայց Բարօնը գուշակեց դորան։

«Ընկարելի է այդ», ասաց նա։ «Ես այսքան տարիներ ապրումեմ խաղաղութեամբ բոլոր դրացիների հետ։ Ես հաւատարիմ հպատակ եմ նո-րին մեծութեան, Լուդովիկոս տասն և չորսերորդին, և իմ խիղճս տանջում չէ ինձ ոչինչ յանցանքի մասին։ Ուրեմն հանգստացիր դու, հանգստացրու

նոյնպէս Օրմօնդ տիկինը և նորա երեխայքը։ Ես համարձակութեամբ հանդէպ եմ գնում գալոցքին, որպիսի և լինէր նա։ Ի՛նչ միտս պիտի հասուցանէր ինձ Թագաւորը, որովհետև ես նորան վշտացուցել չեմ»։

Այս նշանացի արեց իւր ծառային և ապա յառաջ գնաց, սպասաւորը յետքից, ամրոցի միջով դէպ ի այգու առաջակողմեան մուտքը։

Մ՚Կրտիչը սխալուել չէր։ Բարձր երկաթի դարպասի մօտ, որտ գաւազանները Թողումէին միջից դուրս նայել, կանգնած էր մի խումբ զինուորներից, մի աստիճանաւոր նոցա գլխին։

Պարոն Օրսանժը մօտեցաւ վանդակապատին։

«Ի՛նչ էք կամենում այս ամրոցի տիրոջից, հարցրեց նա, ուղղելով իւր խօսքը դէպ ի աստիճանաւորը, որ շատ մօտ կանգնած էր դարպասի առաջև։

«Ո՛չա, Դուք Բարօն Օրսա՛նժն էք», հարցրեց աստիճանաւորը»։

«Ո՛չո՛, պարոն»։

«Արեմն բացէք դուռը։ Ես հրամայում ձեզ Թագաւորի անունով»։

«Կարո՞ղ եմ խնդրել ձեզանից ցուցանել ինձ ձեր գրաւոր հրամանը»։

«Ի՛ հարկէ»։ Ահա, տեսէք։

Աստիճանաւորը դուրս հանեց պաշտօնական զգեստի տակից մի Թուղթ և մատուց Բարօնին վանդակապատի միջով։

Լուսինը փայլում էր այնպէս պայծառ, որ պարոն Օրսանժը կարող էր պարզ որոշել քաղաքապետի կնիքը և ստորագրութիւնը։

Երբ որ նա կարդացել էր բանտարկութեան հրամանը, յետ տուեց գործան աստիճանաւորին և հրամայեց իւր ծառային.

«Բացի՛ր, Մ՚կրտիչ»։

Այս դողդոջուն ձեռքով մի ծանր կապոց բանալիների դուրս հանեց գրպանից։

Բարօնը առաւ բանալիքը և անձամբ անձին բացեց դուռը։

Աստիճանաւորը իւր ընկերակիցներով ներս մտաւ։

Օրսանժը գալմացաւ տեսանելով իւր անձը իսկոյն շրջապատուած զինուորներով։ Աստիճանաւորը մօտեցաւ նորան և ասաց.

«Տէր Բարօն, ես բանտարկումեմ Ձեզ Թագաւորի հրամանով»։

Այս խօսքերը Բարօնի սիրտը չթուլացուցին. ըստ որում նա գիտէր իւր անձը ամենայն յանցանքից աղատ, որ կարող էր կորստաբեր լինել նորան։

«Ես ինչ պատճառով պարտաւորուած եմ եա, պարո՛ն». Հարցրեց նա։

«Արքեական յանցանքով», պատասխանեց աստիճանաւորը։

«Ես լինիմ քրէական յանցաւոր, ձայն արձակեց Օրսանժը բարկացած»։ Ո՞ր ամբարիշտը համարձակուել է այդպիսի յանցանք դնել իմ վերայ։

«Այդ չգիտեմ ես և հարկաւոր ևս չէր ինձ գիտել», պատասխանեց աս-

տիճանաւորը։ «Ես լցուցանումեմ միայն ինձ տուած հրամանի պատուէրը»։

«Այնչէ այս բանը լինումէր, ալևոր Մկրտիչը հեռացել էր և ծանուցել էր Բարօնուհուն պատահածը»։

Նայն րոպէին, երբ Բարօնը իբրև կալանաւոր պիտի տարուէր իւր յաւտուկ ամրոցը, շտապեցաւ Օրսանժ տիկինը մտնենալ նորան, բերելով իւր հետ իւր բարեկամուհի, տիկին Օրմենդը։ Բարօնուհին իւր ամուսին պրը զինուորների մէջ տեղում տեսանելով, սկսաւ բարձրաձայն լալ և կամէր ձգել իւր անձը նորա գրկի մէջ։

Բայց աստիճանաւորը կոշտութեամբ բաց հալածեց նորան, ասելով.

«Կալանաւորը իմ հրամանով արգելուած է հաղորդութիւն ունենալ իւր ընտանիքի հետ»։

Ապա դարձուց դէմքը դէպ ի զինուորքը.

«Տարէք նորան դէպ ի ամրոցը, որոնեցէք մի ապահով սենեակ և ամենայն զգուշութեամբ հսկեցէք նորա վերայ։ Եթէ կամէր նա ընդդիմանալ կամ թէ փախչել, ապա դրեցէք նորան կապանքի մէջ»։

Բարօնուհու սիրտը ահից ու դողից գրեթէ մօտ էր նուաղելու։ Մի ձայն արձակելով, ընկաւ նա իւր բարեկամուհու գիրկը։ Երեխայքը սկսան լալ բարձրաձայն։

«Հանգստացէք, իմ սիրելիք», ասաց Օրսանժը։ «Որովհետև ես անպարտ գիտեմ իմ անձը, կարող չէ ոչինչ ծանր վտանգ հասանել ինձ։ Ես կ'իմանամ թէ ով էր իմ ամբաստանողը և դատաստանի առաջև կ'ամբաստանեմ նորան։ Նորին մեծութիւնը, մեր ողորմած և արդար թագաւորը այնուհետև կը պատժէ բամբասողին այնպիսի պատուհասով, որոյ արժանի էր նորա ամբարիշտ գործը»։

«Ըրդեօք բամբասո՞ղ էին Ձեզ, տէր Բարօն», ասաց աստիճանաւորը խաւար դէմքով, կը ստուգուէր քննողական ատենի մէջ։ Այժմ խնդրուեմ տալ ինձ ձեր մատենադարանի բանալիքը»։

«Ո՛նչ կամիք դուք որոնել այն տեղ», հարցրեց Բարօնը։

«Ես պատուէր եմ ստացել, քըրտնելու ձեր թուղթերը, որ գտանեմ ձեր յանցանքի ապացուցութիւնքը»։

«Այն տեղ ոչինչ գտանելու չէք, պարո՛ն»։ Անյա՛ ձեզ բանալիքը։

Օրսանժը որ կրումէր իւր մօտ մատենադարանի և իւր գրասեղանի բանալիքը, յանձնեց դորանց աստիճանաւորին։

«Եթէ ցանկալի էր ձեզ, պատրաստ եմ ես ինքնին առաջնորդել ձեզ այն տեղ»։

«Խարի՛ է, ընդունումեմ ձեր առաջարկութիւնը։ Եկէք»։

Ամենքեան դիմեցին ամրոցի ներսը։

Օրսանժ տիկնոջը իւր բարեկամուհին և Մկրտիչը առաջնորդեցին դէպ ի նորա սենեակը։ Երեխայքը հետևեցան նորան։

Ընդ տեղ Բարօնուհին արտասուելով գրկախառնեց իւր ամուսնական սիրոյ առհաւատչեայքը, և ձայն արձակեց.

«Ախատրիս, Ադոլֆ. պաղատեցէք առ Աստուած, որ նա իւր հովանաւոր բաղուկը տարածանէ ձեր սիրելի հօր վերայ և ունայնացնէ ամբարիշտների նենգաւորութիւնը»:

Խարօնը, երկու ձեռքից բռնած լինելով զինուորները, աստիճանաւորի հետ ներս մտաւ մատենադարանը: Մի սպասաւոր ճրագը ձեռին, լուսատու էր:

«Ընդ տեղ ահա գրած է իմ գրասեղանը, որ պարունակումէ իմ բոլոր թուղթերը, ասաց Օրսանժը. այդ է իմ թղթերի միակ պահարանը»:

«Ես կը գտանեմ», ասաց աստիճանաւորը:

Նա բացեց գրասեղանի պահարանը: Բոլոր թուղթերը ուշադրութեամբ աչքի տակ ձգուեցան: Երկար չտևեց, և ահա գտաւ նա մի թերթ, որոյ ճակատը կրումէր պետիսի մակագիր. «Իմ ամենագաղտնի մտածութիւնքը ցերութեան և եկեղեցու մասին»: Նա թերթեց այս գրուածը և կարդաց նորա մէջ:

«Մինչ որ ես այս տեղ գտանումեմ, ասաց նա, յօնքերը հաւաքելով», ցուցանում չէ ձեղ իբրև մի հաւատարիմ և օրինաւոր հպատակ, տէր Բարօն: Ահա արդէն բաւական էր լինելու գտանելագ ընդդէմ ձեր»:

«Այդ գործը գրած է գալոց դարերի համար», պատասխանեց Բարօնը: Դորա բովանդակութեան հետ պիտի ծանօթանան իմ թոռների թոռները»:

«Երդեօք դա վնասակար էր տերութեանը, թէ ոչ, այդ բանը կը վճռեն ձեր գտաւորքը, տէր Բարօն: Թող որոնենք մեք միւս թղթերը: Վէր կալէք մատեանքը զետեղարանից», հրամայեց նա զինուորներին:

Կատարուեցաւ: Բոլոր մեծագիր գրքերը ձգուեցան գետնի վերայ:

Կարճ միջոց որոնելուց յետոյ, գտաւ աստիճանաւորը այն թուղթը որ մատնիչ Օրմնդը իւր, ամրոցի մէջ ներկայութեան վերջին գիշերին թաքուցել էր մի հռոմէական հեղինակի գրքի մէջ: Նա բացեց այս թուղթը և կարդաց.

«Ահա, այս տեղ կայ մի բան, որ շուտով կը խոնարհեցնէ ձեր հպարտութիւնը, իմ պարոն: Ահա թղթի մէջ գրած են ձեր յանցանքի ապացուցութիւնքը:

«Ես ոչինչ չգիտեմ այդ գրուածի մասին», ասաց պարոն Օրսանժը. «ես չգիտեմ դորան»: Ցոյց տուեցէք ինձ այդ թուղթը»:

«Երբ որ դուք կանգնած կը լինիք գատաստանի առաջև, այդ թուղթը կը դնեն ձեր առաջև», պատասխանեց աստիճանաւորը: «Ձինուորներ, դրեցէք կալանաւորը շղթաների մէջ:

Պարոն Օրսանժը կապուած, տարուեցաւ մի սենեկի մէջ, որ ունէր մի մուտք միայն: Երկու զինուորք լցած հրացաններով կարգուեցան նորա վերայ պահապանք:

ԳՕԴՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ:

Ա-ՐՅՈՐԱԿԱՆՔԸ:

Պարօն Օրսանժի բանտարկութիւնը իւր սեփական ամրոցի մէջ տեւեց շատ օրեր: Դա այնպէս խիստ էր, որ նա կարող չէր հաղորդակցութիւն ունենալ ոչ իւր ամուսնակցի և ոչ իւր զաւակների հետ: Անօգուտ էին Օրսանժ տիկնոջ պաղատագին խնդրուածքը աստիճանաւորից, որ պիժմ դարձել էր տէր ամրոցի մէջ, շնորհել նորան մի խօսակցութիւն իւր ամուսին տղամարդի հետ. անօգուտ էր երեխաների աղաչանքը. թոյլ տուեցէք մեզ տեսանել մեր բարի հայրը: Աստիճանաւորի սիրտը երեւումեր քարից, կամ թէ նա ստացել էր նախապարից որոշակի հրաման այդպիսի խստութեամբ վարուելու:

Պարօնը, որոյ սիրտը վկայումեր իւր անմեղութիւնը, այրական հաստատութեամբ համբերեց իւր բանտարկութեանը: Նա հաւաստի էր, որ կարող է դատաստանի առաջև ամենայն ամբաստանութեան աներկիւղ հանդիպել: Բայց այլապէս էր նորա ամուսնակցի սիրտը. նա օր ու գիշեր անդադարումեր արտասուելով և անտարակոյս պիտի յաղթուած լինէր իւր ցաւից, եթէ չգտանէր Օրմօնդ տիկնոջ մէջ մի ախտակից բարեկամուհի և մխիթարիչ: Սա Բարօնի բանտարկութենից երկու օր յետոյ ուղարկել էր մի ձիաւոր լրատար դէպ ի իւր ամուսին տղամարդը Վերսայլում, որ պիտի տեղեկութիւն տար նորան Օրսանժի ամրոցում պատահած անբաղդ անցքի մասին: Միանգամայն և պարունակվումեր նամակի մէջ խնդիրը, որ եթէ Բարօնի կեանքը ստուգապէս մի ծանր վտանգի տակ էր, Օրմօնդը պալատում բարեխօս դառնուի:

Լրատարը գործ դնելով ամենայն արագութիւն, շուտով վերադարձաւ, բերելով Օրմօնդ տիկնոջը մի նամակ, որոյ մէջ նորա ամուսին այրը ցաւումեր իւր աղնուամիտ ազգականի դլխի անցքի վերայ, խորտումեր հաստատուն մնալ, այլև ասումեր թէ հաւաստի է ինքը, որ Բարօնը արդարացած դուրս կ'երթայ այս դատաստանական գործի միջից, որ յառաջացել է միայն խարդախ ամբաստանութենից: Եղբօրիակելով նամակը, պատուիրումեր իւր ընտանիքին այնքան երկար մնալ Օրսանժեան ամրոցի մէջ, մինչև կը ստուգուի Բարօնի անմեղութիւնը. այնուհետև ցանկալի էր իւրեան, ինչպես յաւելացրած էր նամակի մէջ, իւր ընտանիքը ունենալ իւր մօտ. որովհետև նորա պաշտօնական գործը պալատում արդէն կարողութիւն է տալիս իւրեան, իւր կնոջը և երեխաներին մի պատշաճաւոր պատսպարան տալ:

Օրմնդ տիկինը իսկոյն հաղորդեց այս նամակին իւր բարեկամուհին և դորան ներկայ էր Բէատրիսը։

«Ա՜հ, ես քաջ գիտէի, որ իմ ամուսին այրը երկբայելու չէր պարոն Օրսանժի անմեղութեան վերայ», ասաց Օրմնդ տիկինը։ Նա ձեր ամուսին տղամարդից տեսել է այնքան մեծ բարերարութիւնք։ Նա գործ կը դնէ ամենայն հնար, Բարօնի անարատ դիտաւորութիւնքը դէպ ի Ֆրանսիայի թագաւորը լուսաւիայլ կացուցանել լիովին։

Ի՞արօնուհին այս նամակովս փոքր ինչ մխիթարուեցաւ։ Նա գրկախառնեց Օրմնդ տիկինը և խնդրեց նորանից իւր պատասխանագրութեան մէջ առ իւր ամուսին այրը, Բարօնի անունով շնորհակալ լինել նորան իւր բարեկամութեան և երախտագիտութեան ապացոյցների համար։

Երբ որ Օրմնդ տիկինը հրաժարուել էր Բարօնուհուց, որ պատասխան գրէ իւր ամուսին տղամարդին, հարցրեց մայրը Բէատրիսից, որ մի այլ հայեացքով նայումէր անշարժ.

«Ա՜յժմ, իմ սիրելի Բէատրիս, չէ՞ք սիրտը զուարթացած յուսով, դնի պարոն Օրմնդի նամակին»։

Մ՜անուկ աղջիկը կամաց բարձացրեց աչքերը և մի ցաւալից հայեացքով նայեց իւր մօր վերայ։ Ապա ցնցեց իւր մուտ մազերի օղերը և պատասխանեց.

«Ոչ, մայր իմ. այդ նամակի վերայ կարող չեմ ուրախանալ»։

«Ինչո՞ւ համար ոչ, իմ մանուկ»։

«Որովհետև այդ նամակի գրողը Օրմնդն է։ Նա չէ մեր անբաղդ, բարի հօր բարեկամը, և ոչինչ հնար գործ դնելու չէ նորա փրկութեան համար, այլ մանաւանդ վնասելու է նորան»։

«Մ՜անուկ դու, դոքա անօրէն խօսքեր են։ Ի՞նչ է պատճառը քո անհրաւ ատելութեան դէպ ի պարոն Օրմնդը»։

«Որովհետև ես տեսել եմ մի հայեացք որ նա ձգեց իմ հօր վերայ, երբ որ սա խորհրդածութեան մէջ դէպ ի ցած էր նայում։ Թէ ի՞նչ կար այդ հայեացքի մէջ, կարող չեմ պարզ ասել, բայց սարսափ եկաւ իմ վերայ, երբ որ նկատեցի ես դորան։ Նա աղդեց իմ մէջ ահ ու սասանութիւն։ Ոչ, ոչ, սիրելի մայր իմ, պարոն Օրմնդը չար մարդ է, երանի՞ թէ նա երբէք ոտք կոխած չլինէր մեր ամրոցի մէջ»։

Ընդուստ եղաւ Օրսանժ տիկնոջ ջանքը, իւր աղջկայ սրտի մէջ ազդել մի աւելի լաւ կարծիք իւրեանց ազգականի վերայ։ Վերսայլումը։ Բէատրիսը կամակորութեամբ իւր կանուխ արմատացած վատ կարծիքի մէջ դէպ ի նա, և պնդումէր կրկին ու դարձեալ, թէ Պարոն Օրմնդի սիրտը խորթ է իւր հօրից։

Ընդնդհատ ցաւի և տրտմութեան մէջ ապրումէր Օրսանժ տիկինը մի ամբողջ ամիս։ Այդ վատաբաղդը զուշակում չէր, թէ տակաւին շատ բան պակաս էր, նորա տառապանքի բաժակը լցուցանելու մինչև եզերքը։

Յանկարծ հրաման եկաւ, պարոն Օրսանժը յանդիման կացուցանել դատաստանական ատեանին ամենամօտ քաղաքում։ Առանց թոյլ տալու նորան հրաժարական ողջոյն տալ իւր ընտանիքին, զինուորներով դուրս տարան նորան ամրոցից մի փակած սայլի մէջ։

Այդ ամենաձիքը մօտ էր յուսահատ լինելու։

Օրմենդ տիկնոջ խորհրդակցութեամբ, նա հետևեցաւ իւր տղամարդին, երեխաներով։ Օրմենդ տիկինը ընկերակից եղաւ բարեհուն իւր գերդաստանով։

Օրսանժեան ամրոցում մնաց միայն ալևոր Մկրտիչը կալուածատիրոջ սակաւաթիւ ծառաների հետ։

Այսպէս ահա բաղդաւոր գերդաստանը դարձել էր մի անբաղդ գերդաստան։

Այն քաղաքում որ ժողովուել էր դատաստանական ատեանը որոյ առաջև պիտի երևէր պարոն Օրսանժը, կանայքը վարձեցին իւրեանց մի պարզ օթևան, ուր կամէին մնալ մինչև դատաստանական գործի աւարտը։ Եւ այս տևող թոյլ չտուեցին արտաստուղ ամուսնակցին իւր ամուսին այրը որ մի հասարակ յանցաւորի պէս կալանաւորուած տարուեցաւ բանտ, տեսանելու և խօսելու նորա հետ մի քանի միսիթարական և յուսացուցիչ բառեր։

Մի քանի օր յետոյ ժողովուեցան դատաւորքը։

Պարոն Օրսանժը ատեան բերուեցաւ։ Նորա երեսը գունատուած էր բանտարգելութենից, բայց անարատ հոգու քաջութիւնը բազմած էր նորա բարձր ճակատի վերայ և նայուածքներ նորա բաց ու համարձակ ապրից։

Մի արքունի փաստաբան պարտաւորեց նորան իրրև քրէական յանցաւոր և իրրև չարագործ որ դիտաւորութիւն էր ունեցած սպանելու Մէնթընօն տիկինը։

Օրսանժը աղնիւ զայրացմամբ վերուղղեց իւր անձը և հարցրեց.

«Ո՞ւր են ապացուցութիւնքն այդ ամբարիշտ պարտաւորութեան»։

Փաստաբանը դրեց նորա առաջև երեք թուղթ սևածածկոց սեղանի վերայ։

Առաջինն էր Հուգենօտեան աղնուականի նամակը, որ պարոն Օրմենդը գողացել էր պարոն Օրսանժի գրասեղանի պահարանից. երկրորդը — գրած տետրակը որի մէջ գծագրել էր սա իւր գաղտիարքը տերութեան կառավարութիւնը բարեկարգելու մասին, երրորդն էր այն վկայական թուղթը որ թաքուցած գտել էին Օրսանժի գրքերի գետնաղարանի ներսումը։

Դատարանի նախագահ ամենառակալը այս գրուածքը ցոյց տուեց կալանաւորին հարցանելով.

«Պարոն Օրսանժ, խոստովանո՞ւմ ք այս գրուածքը իրրև ձեր սեփականքը»։

Օրանժը մի թևեվ աչք ձգելով առաջին և երկրորդ թղթի վերայ, ասաց, Ա՛յո՛։ Բայց երբ որ կարդաց երրորդի բովանդակութիւնը, նորա աչքը բոցավառուեցաւ ակնիւ տհաճութեամբ և բարձրացրած ձայնով որ դողու-մէր բարկութենից, աղաղակեց, Թուղթը յետ նետելով սեղանի վերայ.

«Այդ գրուածը հնարել է մի վատթար հոգի։ Ես չգիտեմ դորան»։

«Օ՛ւր է ձեր ուրանալը, Բարօն Օրանժ», ասաց նախագահ աթո-ռակալը։ Ձեռագիրը այս ամրարիշտ վկայութեան ձեր յանցանքի է ձեր սե-փականը»։

«Այնու ամենայնիւ ես չեմ դորա գրողը» երդում կերաւ Բարօնը, «Որ և իցէ չարագործ, որ իւր խարդախութեան համար թող պատասխա-նատու լինի արդար դատաւորին վերնութեամբ, նմանել է իմ ձեռագրիս»։

«Ընդհատ պատճառանք։ Ահա Թուղթը գտանուած է ձեր մատենա-դարանի մի գրքի մէջ»։

«Այո, մի գժտոխային գէշ սիրտ նորան թաքուցած լինի այն տեղ։ Իմ ազգատոհմի պարծանքով երդուիմ ես, որ ես ոչինչ չգիտեմ այդ գրուա-ծի և ոչ իսկ նորա պարունակութեան մասին, և այժմ իսկ ծանօթ եմ միայն կիսով չափ նորա դատապարտելի խորհրդին»։

«Որպէսի տեղեկացէք այժմ դորա բովանդակութեանը կատարելա-պէս» ասաց նախագահ աթոռակալը։

Այնուհետև պարտաւորուածի առաջև կարդացին այդ վկայականը։ Դա պարունակութեամբ մի դիւական խորհուրդ սպանելու Մեծիընօն տիկինը և այդպէս այն կինը, որ եղել էր պատճառ վերացնելու Դանտէսեան հրա-վարտակը և գլխաւոր հետևանքը անողորմ հալածանքների ընդդէմ Հուգենո-տեանց, բնաջինջ առնելու երկրից իրև մի կորստարեր պլանդակ գաղան։ Բարօնը այդ վկայականի մէջ յիշվում որպէս պարագլուխ մի ծածուկ միա-բանութեան, որ բաղկանում միայն Հուգենօտներից, ուրեմն և պատկա-նում ինքը այս կրօնական բաժնին։

Պարոն Օրանժը, լսելով այս անարժան մեղադրանքը, յաղթեց իր բարկութեանը որ եփ էր գալիս նորա մէջ։ Մի արհամարհական ժպտումն մի-այն խաղում նորա շրթունքի չորս կողմով։

«Այս գրուածի մէջ պարզ ու բացայայտ ցոյց է տուած ձեր յանցան-քը», ասաց նախագահ աթոռակալը, մինչև Բարօնը տակաւին լուռ էր։ Դուք ունէիք միայն ըներանացի հաստատել նորան, և այնուհետև աղերսել Նորին մեծութեան, մեր ամենագութ թագաւորի շնորհը, որպէս զի նա մեղ-մացնէ այդ յանցանքի վերայ դրած պատուհասը որ դատարանը սահմանե-լու է ձեզ»։

Օրանժը դարձաւ դէպ ի դատաւորը այսպիսի խօսքերով.

«Ես կրկնում եմ, որ չգիտեմ այդ գրուածը և այդպիսի խորհուրդ յղա-ցել չեմ իմ մէջ։ Իմ ձեռագիրս հրատարակում խարդախութեամբ նմա-

նադործած՝ ես ոչ Հուգենօտ իմ, ոչ դարանագործ, այլ հաւատարիմ հպատակ Թագաւորի։ Ես իմ հաւատարմութիւնը փորձով ապացուցել եմ, շատ տարիներ յառաջ, մինչ գեռ առանձնացած չէի իմ կալուածների մէջ, միւս շատ քաջ պատերազմողների շարքում Թափելով արիւնս կռուի դաշտի մէջ ընդդէմ նորա Թշնամիների։ Թէ ես մի ժամանակ մի անբաղդ Հուգենօտի, որ իրրև բարեկամ սիրելի էր իմ սրտին, պահպանել եմ մի նախատական մահու երեսից, ճշմարիտ է։ Բայց, շատ տարիներ անցել են այդ ժամանակից, և նրանից ես այդ մեղգասիրական գործով մեղանչել եմ ընդդէմ Նանտէսեան հրովարտակի վերացմանը, դորա փոխարէն իմ անցած օրերի կեանքը և իմ յետոյ ժամանակի հաւատարմութիւնը նորին մեծութեան գնումեմ կշռի Թաթի մէջ։ Իմ գրուածս տէրութեան կառավարութեան վերայ է միայն փիլիսոփայի երազ և երազները ոչ մի ֆրանսիական դատարան մինչև այսօր դատապարտել չէ։ Որպէս ես չեմ խոստովանում իմ անձը իմ վերայ դրած յանցանքին պարտական՝ Թէ ո՛վ էր այն ամբարիշտը, որ այդ դժոխային նենգաւորութեան և դաւաճանութեան որոգայթը լարել է ինձ, չգիտեմ, և նրանից ծնանէր իմ մէջ մի գուշակութիւն իսկ, ես մերժելու էի դորան, որովհետև չկամէի հաւատալ Թէ կարելի էր մի այդպիսի վատթարութիւն մարդկային բնութեան։ Բայց երես առ երես հանդիպ բնրեցէք ինձ այն մարդը. նրանից սատանայ չէ նա, ապա յայս ունիմ որ այս հայեացքը դէպ ի գետին կը խոթտակէ նորան և նա իւր չարագործութիւնը ապաշաւելու էր»։

Կարօնը ակնարկեց դէպ ի իւր շղթայքը որով բեռնաւորած էին նորա ձեռները և ապա ուղղեց մի ցաւալից հայեացք դէպ ի առաստաղը, վկայ կանչելով Աստուած իւր անմեղութեանը։

Բայց ատենակալքը մնացին անշարժ։

Դատաւորների սառուց կտրած երեսի վերայ դրած էր դատապարտական վճիռը ընդդէմ անպարտին։

Ոչնի կարճատև խորհրդակցութեան ատենակիցների հետ, առայ նախագահ ասաուակալը.

«Ձեր յանցանքը այնպէս պարզ է որպէս ցերեկի լոյսը, կամիք դուք խոստովանել և ձեր պարտակիցների անունները տալ, ապա, յարգելով այն արդիւնակատարութիւնը որ մի ժամանակ ցուցած էք տէրութեանը, կը յանձնեմ ձեզ Թագաւորի շնորհին»։

«Ոչինչ բան չունիմ խոստովանելու, քան Թէ արդէն ասել էի», պատասխանեց Օրսանժը։ Որովհետև պարտնակութիւնը այն գրուածի, որ է դիտաւորութիւն սպանելու Մենթենօն տիկինը, կարող չեմ ես յանձն առնուլ, ապա և չունիմ ոչինչ պարտակից»։

«Տանջանքը կ'ուսուցանէ ձեզ ուրիշ տեսակ խօսել», ասաց սառնութեամբ նախագահ ասաուակալը։

Կայ նշանացի արեց գոնապանին։ Սա հրամայեց դատարանի ծառաներին ցած տանել Բարօնին դատարանի ներքևում գտնուած գետնափորի (սարդափի) մէջ։

Այս էր տանջանարանը, ուր, չլինելով ոչինչ լուսամուտ, տիրում էր մշտնջենաւոր խաւար, եթէ դա չէր լուսաւորվում փայլողութեամբ մի ներկաթի լապտերի որ կախ էր տուած զարհուրելի տանջողական նստարանի վերայ։

Այն տեղ կանգնած էին դահճապետի ծառայքը, պատրաստ ընդունելու անբաղդին։

Տնօրէնը այս գետնափորի, որոյ հաստ քարեայ պատերը դարաւոր ժամանակներով դէպ ի դուրս անկանելի էին կացուցել այս տեղ չարչարուած զոհերի ցաւալից աղաղակները, այդ տեղ գտանուած գործիքը որոց գիւտը կարելի էր աւելի հնչակընծայել դժոխքի դևերին քան թէ մարդկային ազգին, մի քանի րոպէ դղրդեցին Բարօնի այրական հոգին։ Նա մոռաբերից իր ամուսնակիցը, իր երեխայքը։ Ուղէ և ուռղէ հրաժարուիլ էր նոցանից։ Եթէ նա մի օր ստանալու էր ազատութիւն դարձեալ տնօրինելու նորանց, արդիւնի աղէտալից ցաւ պիտի ըմբռնէր այս սիրելիների սիրտը, երբ որ նա իբրև մի թշուառ խեղանդամ, ջարդուփշուր մարմնով—նա գիտէր տանջանքի ազդեցութիւնը—երևելու էր նոցա առաջև։ Բայց երբ որ դահիճքը արձակեցին նորա կապանքը, մերկացրեցին նորան և կապեցին տանջանքի փայտի վերայ, այդ տեղ դարձեալ ղօրացաւ նորա, ահից ճնշած հոգին խոստովանելով իւր անմեղութիւնը, և նա պաղատեց առ երկնաւոր Հայրը, որ ղօրութիւն տայ իւրեան և ամենազարհուրելի տանջանքի մէջ հաստատուն մնալու իւր խորհրդի վերայ, որ էր իւր ազգատոհմի յիշատակը չապականել մի ստասցութեամբ։

Մենք չկամինք մեր ընթերցողներին մանրամասնաբար նկարագրել այն տանջանքը որ երեք աստիճանակարգով սահմանուած էին պարոն Օրսանժին, բաւական էր նոցա իմանալ, որ այդ այդ ազնիւ տղամարդի մարմինը, բայց ոչ հոգին խորտակուել էր, և թէ նա ամուր ու հաստատ մնաց իւր անմեղութեան խոստովանութեան վերայ։

Այց, արդիւնի փոխոխութիւն յառաջացել էր նորա արտաքին կերպարանքի մէջ, երբ որ նորան երրորդ օրին դարձեալ բերեցին այն տեղ, ուր պիտի յայտնէին նորան իւր դատակնիքը։ Նորա մի փոքր յառաջ մուգ մազերը սպիտակել էին, աչքերը խոր էին ընկել իւրեանց փոսերի մէջ։ Նորա երեսի գոյնը նման էր մի դիակի գոյնի։ Տանջանքի գործիքը գօսացուցել էին նորա բարձրը և ոտքը։ Նորան պէտք էր ձեռքի վերայ կրել ատենի առաջև։

Ընդհակառակ նա և տանջանքի մէջ խոստովանել չէր իւր անձը պարտաւոր, այնու ամենայնիւ ատեանը կատարեց նորա վերայ մի դատապարտական վճիռ։

Դա շատ մեղմ էր, ինչպէս ասաց Նախագահ աթոռակալը։ Դորա ջնջումեամբ Բարօնը և իւր գերդաստանը զգուեցան իւրեանց յոլոր կալուածներից և պիտի յաւիտեան տարագիր լինէին Ֆրանսիայից։

«Ձեր դատավճիռը» ասաց Նախագահ աթոռակալը։ «կը լինէր աւելի խիստ, եթէ ձեր ազնուամիտ ազգականը, Մարկիզ Օրմօնդը բարեխօս չլինէր մեր յաղթող Թագաւորի, Լուդովիկոս տասն և չորեքորդ ամուսնակցի առաջև։ Նորա բարեխօսութեանը պարտական էք Թագաւորի շնորհը. ապա թէ ոչ, ձեր կեանքը կորուսած կը լինէիք պլիատման բլուի վերայ»։

Պարոն Օրսանժը պատասխանեց այս դատավճռին մի լոկ անխօս հայեացքով դէպ ի երկինք։

«Ա՛յժմ ազատ էք դուք, և կարող էք հանդիպել ձեր ընտանիքին» խօսքը յառաջ տարաւ Նախագահ աթոռակալը։ Դոքա գտանվումն այս քաղաքումն և ուղեկից կը լինին ձեզ դէպ ի աքսոր։ Այժմ հեռացէք այս տեղից»։

Ո՛չ. այս վերջին խօսքերը ասվումէին մի տղամարդի, որ անդամալոյծ նստած էր այն տեղ և կարող չէր շարժուիլ տեղից։

Նախագահ աթոռակալը նկատեց այդ տկարութիւնը. նա հրամայեց դատարանի սպասաւորներին.

«Դուգայէք դուրս տանելու Բարօնը դէպ ի տողց, թող նա որոնէ օթեւանը իւր ամուսին կնոջ որ, ինչպէս յայտնի է ինձ, գտանվումէ մօտակայքումն»։

Ա՛յս երջումը դարձեալ խօսքը ուղղեց դէպ ի անբաղդը.

«Ա՛ղուեան օրի արևածագին պիտի ճանապարհ ընկնէք. Ձեր ապագայ օթեւանը Ֆրանսիայից դուրս կարող էք ընտրել ուր և կամիք»։

Դատարանի ծառայքը լցուցին ինչ որ հրամայած էր նոցա։ Անբաղդ ծերունին վեր կալան երկու զօրեղ մարդիկ և ցած տարան ուր պրեցին այն տան դարպասի առաջև, ուր արդարութիւնը մի թագաւորի բռնակալութեան տակ փոխարկուել էր մի ամօթակորոյս (ամօթը կորցրած) բոզ աղջիկ։

Այս տեղ գրկախառնեցին նորան իւր սիրելիքը, ամուսին կինը և երեխայքը արտասուքով թաց արեցին նորա գունատուած երեսը։ Նոքա իմացել էին, որ այսօր պիտի հրատարակուէր դատավճիռը, և արտասուելով ու աղօթուելով սպասումէին դրան մօտ դատաստանական գործի վերջաւորութեանը։

Ա՛յժմ բացուեցաւ մի տեսարան որ արտասուք դուրս ճնշեց և աչքիցը ժողովրդի որ հարցասիրութեամբ հաւաքուել էր այդ գերդաստանի չորս կողմը։

Օրմօնդ տիկինը որ նոյնպէս ներկայ էր այս տրտում վերստին տեսութեան միջոցին, գործակատար եղաւ փոխանակ Բարօնի ամուսնակցին որ նուաճուած էր ցաւից։ Նա կանչեց մի քանի մարդ ժողովրդից, արծաթ տուեց նոցա և խնդրեց զգուշութեամբ տանել Օրսանժը դէպ ի իւրեանց հա-

սարակաց օթևանը որ հավիտ թէ հարիւր քայլաչափ հեռի էր դատարանի տնից։

Օրսանժը հինգ րոպէից յետոյ հանգստացած էր մի փափուկ մահճի մէջ, մի մաքուր սենեկում։

Ինչ այս րոպէս նորա լերանը լուռ էր ճնացել դէպ ի իւր ընտանիքի փայփայանքը. այնուհետև բացուեցաւ նա.

«Ինձ անիրաւ թեամբ դատապարտել են, մուրացկան են շինել և արտաքսել են հայրենիքից։ Ես մեռած կը լինէի տանջանքի մէջ, եթէ ձեր պատկերը, ով իմ սիրելիք, ներկայացած չլինէր իմ աչքի առաջև։ Ես գիտէի, որ դուք կարող չէիք տանել իմ մահուն, վասն որոյ պիտոյ էր ինձ ապրել։ Աստուած ողորմած եղաւ անբաղդին։ Իմ սիրելի ամուսնու, իմ երեխաների բաղուկները գրկախառնումն ինձ. ձեր հայեացքը, ձեր խօսքերը մխիթարումն և զօրացնումն ինձ։ Այնպէս հաստատ, որպիսի եղած եմ ես իմ անիրաւ դատաւորների առաջև, կը տանեմ և իմ մարմնաւոր թըշուառութեանս, այժ ստանալով ձեր սիրուց, այնքան երկար, որչափ հաճոյ է Աստուծոյ։ Բայց գնանք, հեռանանք այս տեղից, ոչ թէ վաղիւը, այլ այսօր իսկ։ Բոլոր Ֆրանսիան դարձել է մի ժահահոտ բանտ այս Լուդովիկոսի իշխանութեան տակ, Լուդովիկոսի, որին շողոքորթող մարդիկ միայն աստուածն մեծ։ Թող աշխատենք դուրս գալ այս վիրապից։ Թէ ուր, բոլորը մին է իմ համար։ Այո՛ տակաւին կը գտանուի մի աշխարհ երկրիս վերայ, որ տալու էր ձեզ մի պատսպարան և ինձ մի օր մի փոքրիկ տեղ իմ գերեզմանիս համար»։

Գառն արտասուք թափելով տիկին Օրսանժը, խորհրդակցութիւն իւր բարեկամուհու հետ, թէ ինչ ճանապարհ պէտք էր նորան ընտրել իւր ամուսին տղամարդի հետ և ուր պատսպարան որոնել։ Այնուհետև մտաբերեց նա մի ազգական իւր կողմից, մի պարոն Վերկուր անունով, որ պատկանութիւն Ֆրանսիայի Հուգենոտներին և մի ժամանակ, երբ այս կրօնական բաժնի ընդդէմ սկսած էին հալածանքը, փախել էր դէպ ի Խաղիա և իւր գերդաստանով տուն ու տեղ էր հաստատել Մանտուա քաղաքում։ Նորա ընտանիքը շատ տարի արդէն մեռած էին մի վարակիչ ընդհանուր ցաւով։ Այժմ ծերութեան մնացած ապրումէր նա, մենակ, իւր կալուածում, այդ քաղաքի մօտակայքում։

Տիկին Օրսանժը որ յառաջուց, երբ նորա ծնողքը տակաւին կենդանի էին, իրրև մանուկ աղջիկ շատ անգամ տեսած էր պարոն Վերկուրին և խօսել էր նորա հետ, ճանաչումէր նորան իրրև մի աղնուամիտ, մեծահոգի տղամարդ։ Նորա մօտ, որ իւր գոյքը տակաւին իւր փախստից յառաջ ապահովել էր, յոյս ունէր Օրսանժ տիկինը իւր ամուսին տղամարդով և իւր երեխաներով ընդունելութիւն գտանել։ Ինչպէս այժմ իւր ամուսին այրը, նոյնպէս այդ ազգականը մի ժամանակ վնաս էր կրել Լուդովիկոս տան և

չորեքշաբթի օրերում։ Նա ծանօթացած էր ձախորդութեանը և այս պատճառով իր անբաղդ ազգականքը չէր հալածելու իր դռնից։ Թող այս. մի քանի տարի յառաջ նամակ էր ստացել պարոն Վ.երկուրից որ նորան տեղեկութիւն էր տալիս թէ ինչպէս մի գլուխ և միայնակ ապրումէր նա։

Ահա պարոն Օրսանժին յայտնեց իր խորհուրդը թէ կամէր այս ազգականի օգնականութիւնը որոնել։

Նորա ամուսին պրը հաւան էր այս խորհրդին. պատճառ, թէև նա ծանօթ չէր պարոն Վ.երկուրի հետ, բայց լսել էր նորա աշխուժութեան և վեհմահոգութեան գովաստանութիւնը։

Բայց ճանապարհորդութիւնը մինչև այն տեղ երկար ու դժուարին էր։ Ընտանիները արդէն օգոստոսին աշնան խոշոր հողմի երեսից, և այն հիւանդ մարդը մի փակ, յարմար սայլի մէջ տանելու, չունէր Օրսանժ տիկինը հարկաւոր արծաթը։ Իր ամրոցից կարողացել էր նա միայն չնչին արծաթ առնուլ իր հետ։ Այն տեղ հրամայող աստիճանաւորը, կալուածատիրոջ դանձին տիրապետել էր, այլև նորա ամուսնու մարգարտեղէնքը առել էր որպէս թագաւորական սեփականութիւն. նորա ձեռքում եղած փոքրիկ արծաթը արդէն կիսից աւելի դուրս էր տուած այն միջոցին, երբ երկու կանայքը և նոցա երեխայքը ապրումէին այս քաղաքում ուր այսպիսի ձախորդութիւն փուլ էր եկել Օրսանժի ընտանիքի վերայ։

Ուրեմն Օրսանժ տիկինը կարող էր միայն մի շինական սայլ վարձել մինչև Ֆրանսիայի սահմանը։ Այդ սայլի վերայ կինը սիրող ձեռքով պատրաստեց իր անբաղդ տղամարդին, ինչքան կարելի էր, փափուկ հանգըստարան. ինքն իր որդով ու աղջկով պիտի նորա մօտ տեղաւորվէին մերկ յարդի վերայ։

Տակաւին նոյն երեկոյին կամենումէին նոքա թողուլ իւրեանց ձախորդութեան տեղը։

Բայց յառաջ քան թէ ճանապարհ կ'ընկնէին, պիտի լինէր մի ցաւալի հրաժարումն միմեանցից Օրսանժեան և Օրմնդեան գերդաստանների մէջ։

Օրմնդ տիկինը, որ յետ մնաց քաղաքումը սպասելու, մինչև իր ամուսին տղամարդից արծաթի կը ստանար ճանապարհորդելու դեպ ի Վերսալ, գրկախառնեց իր բարեկամուհին և պարոն Օրսանժին, տաք արտասուքի հեղեղներ թափելով։ Այդ ալևիւ, հեզ կնոջ սրտին մի ամենամեծ անտանելի ցաւ էր, այնպէս անասելի անբաղդ տեսանել մի տղամարդ որ այնքան մեծահոգի էր գտանուել դեպ ի ինքը և դեպ ի իր ամուսին պրը։ Նա երդուելով վկայեց իր մշտնջենաւոր շնորհակալութիւնը, և խոստացաւ իր ամուսին տղամարդի անունով վերստին հատուցանել նորան այն արծաթը, որ նա մի քանի ամիս յառաջ ստացել էր պարոն Օրսանժից։

«Պարոն Օրմնդը» ասաց այդ կինը, «պարտական է ձեղ աւելի քան թէ իր կեանքը, այսինքն փոխարկութիւնը դեպ ի լաւին, իմ սէրս յաւի-

տևան դարձուցանելու էր Երեսը Նորանից, այո՛ ես պիտի արհամարհէի Նորան, եթէ նա երբ և իցէ կարող էր մեռանալ ձեր մեծահոգութիւնը։ Ըստ որով տեղեկութիւն տուեցէք մեզ ձեր կացութեան տեղին, որ մենք կարողանանք փոխարէնը հատուցանել։

Այդպիսի արտով բաժանուեցան միմեանցից և երեխայքը. նորա հեկեկալով դրկախառնեցին միմեանց և Գուստաֆն ու Ֆլերիսիտէն վազումէին տակաւին ապրի հետևից, երբ որ նա ծանր դուրս էր շարժվում քաղաքի դռնից, և ձեռքով համբոյրներ էին ուղարկում Օրսանժ տիկնոջը և նորա երեխաներին։

Կարօնը անդադար վշտանալով այն ցաւերից որ հասել էին Նորան տանջանարանի մէջ, ճանապարհորդութիւնը յառաջադէմ էր ծանր ու կամաց և տևեց շատ օրեր, մինչև հասան նորա Իտալիայի հողատահմաններին։ Այլև պարոն Օրսանժի ղօրութիւնքը օրէ օր նուազումէին աւելի, թէև Նորա ամուսինը և Բէատրիսը ամենայն հոգատարութեամբ և անձանձիր խնամարկումէին Նորան։ Նորա աչքը գնալով գնալով պղտորվումէր, լեզուն թուլանումէր։ Նորա կուրծքից լսելի էր մի դատարկ և ցամաք հազ։ Բայց Օրսանժ տիկինը, վասն իւր բաղդաւորութեան, գուշակում չէր թէ շուտով պիտի քայքայուի իւր տղամարդի կեանքը. պատճառ, երբ որ նա հոգածութեամբ հարցնումէր հիւանդից. «Ինչպէս ես դու, իմ սիրելի բարեկամ». այնուհետև Բարօնը թագուցանումէր կնոջից իւր ցաւը որ կտրատելով և ծակելով անց էր կենում կուրծքից և շատ անգամ խլումէր Նորա շունչը։ Բարօնի պատասխանը այսպէս էր.

«Այնչափ լաւ եմ, որչափ իմ մարմնիս որպիսութիւնը թոյլ է տալիս։ Բայց աւելի կը լաւանամ, երբ ալպեան սարերը կ'ունենայինք մեր քամակում, և ես կը շնչէի Իտալիայի մեղմ օդը։

Այս բաղդաւորութեանը չպիտի հասանէր աղնիւ Օրսանժը։ Աստուծոյ ողորմասրտութիւնը, որ կամէր ազատել Նորան իւր չարչարանքից, սահմանել էր Նորան մի այլ կեանք։ Նա վերակոչեց այդ անբաղդի, մարմնիցը դուրս ձգտող հոգին դէպ ի աւելի գեղեցիկ, բոլոր արդարներին խոստացած, երկնային օդերը։

Ալպեան սարերի ոտքում, մի փոքրիկ գիւղի խիտ առաջև, ուր դիտաւորութիւն ունէին գիշերել, յանկարծ վերայ հասաւ մահը։ Արդէն մայր էր մտել արևը, երկնակամարի վերայ բոցավառվումէին յաւիտենական աստղները և նոցա հաւատարիմ ուղեկից լուսինը պայծառապէս լուսաւորում էր արձակ ճանապարհը, երբ Օրսանժը խորտալով խնդրեց դադարեցնել սայլը։

Երբ որ սայլը դադարեցուցին, խոնարհեցրեց գլուխը իւր հաւատարիմ կողակցի կուրծքի վերայ և ասաց.

«Ես մեռանումեմ, իմ սիրելի կին — մեռանումեմ առանց տրտնջելու — քո պրկախառնութեան մէջ, իմ հայրենիքումս։ Ո՛հ, մահու մէջ ըզ

գումեմ, որ իմ բոլոր հոգիս տակաւին կապած է Ֆրանսիայի հետ։ Ամիսներ իմ մարմինս նորա հողի մէջ։ Աստուած պաշտպանէ և օրհնէ քեզ և մեր սիրելի երեխայքը, և Թողութիւն շնորհէ իմ թշնամիներին, ինչպէս որ ես շնորհումեմ նոցա։

Աղքա էին նորա վերջին խօսքերը որ հազիւ թէ կարողացաւ դուրս հանել բերանից։ Այնուհետև պապանձուեցաւ լեզուն։ Բայց դեռ ևս հոգին չբաժանուեցաւ իւր աւերակ օթևանից։ Նորա կիսաբեկ աչքը որոնումէր իւր ամուսինը, իւր երեխայքը։

Օրսանժ տիկինը արտասուք միայն ունէր այս րոպէիս, որ յայտնումէր նորանից ամենապատուական բանը որ նա ունէր երկրիս վերայ։

Փոքրիկ Ադոլֆը արտասվումէր իւր մօր հետ։

Միայն տասներկու տարեկան Բէատրիսը, որի խելքը հասունացել էր ձախորդութեամբ, սակաւ ամիսների մէջ, ոչինչ ցաւի արտասուք չթափեց այս խորհրդաւոր ժամի մէջ։ Նա երկու ձեռքով փաթաթուեցաւ մեռանող հօրը, դրեց ականջը նորա բերանին և ձայն տուեց.

«Հայր իմ, սիրելի հայր իմ, կարո՞ղ ես դու տակաւին լսել իմ ձայնը»։

Պարոն Օրսանժը նշանացի արեց թուղթեթեամբ։

«Ո՛վ է կործանել քեզ ձախորդութեան, մահու գերեզմանի մէջ». խօսքը յառաջ տարաւ, «եթէ կարող ես, ասա ինձ անունը այն մարդու, որոյ վերայ կասկածանք ունիս դու։ Ես, քո զաւակդ, վրէժխնդիր կը լինիմ քո մահուն»։

Ծերունին կամէր պատասխանել, բայց նորա լեզուն կապուել էր։

«Ո՞րդեօք Մարկիզ Օրմո՞նդն է այդ չարագործը, հայր իմ։ Ես նորան համարումեմ քո սպանողը։ Մի նշան տուր ինձ, թէ և դո՛ւ այդպէս համարումէիր»։

Մեռանողի շրթունքը շարժուեցան, բայց ոչինչ ձայն դուրս չեկաւ նոցանից։

«Նա է այդ չարագործը, նա միայն կարող է լինել», ձայն արձակեց Բէատրիսը։ Դուռ ներել ես նորան. ես չեմ ներում նորան։ Երդումն եմ ուտում քո սառած ձեռով, որ մի օր այդ պղանդակ գազանից հաշիւ ու համար կը պահանջեմ ես»։

Բէատրիսը խօսումէր արդէն մի մեռածի հետ. պատճառ, ալևորը դուրս էր փչել իւր վերջին շունչը։

Պարոն Օրսանժի վերջին ցանկութիւնը կատարուեցաւ. նա թաղուեցաւ Ալպեան սարերի ստորոտ, մի աղքատին գիւղի գերեզմանատունը։ Ցետ մնացածների խնդրանքով կարեկից գիւղացի քահանան յանձն առաւ մի մեծ քար դնել տալ գերեզմանի թումբի վերայ, որ մի օր կարողանան գտանել վախճանուածի հանգիստը։

Երբ որ Օրսանժ տիկինը լցուցել էր վերջին սուրբ պարտականութիւնը դէպ ի հանգուցեալը, յաւից ու տրտմութենից դէպ ի գետին խոնարհեցրած, շարունակեց իւր ճանապարհորդութիւնը։ Սիրելով իւր զաւակները, քաջալերուեցաւ և յաղթեց ամենայն տառապանքի։ Շատ շաբաթներից յետոյ հասաւ Մանտուային, ուր իւր ազգականի, Վերկուբի տանը գտաւ պնդպիսի ընդունելութիւն, որին արժանի էր նորա անպաղդութիւնը։

Ս. Նալբանդեան։

(Շարունակութիւնը միւս տետրակում.)

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Թէ ի՞նչպէս է յառաջադիմութիւնը կաթոլիկեան բեֆորմի Իտալիայի մէջ։

(PROGRÈS DE LA RÉFORME CATHOLIQUE EN ITALIE.)

Revue britannique 1862. 3-e livraison.

Կարելի է երկբայել, Թէ իտալական ժողովուրդը ունէր այն յատկութիւնքը որ հարկաւոր են տևողական կացուցանելու յաջողութիւնը որով մինչև այժմ պահուած են նորա անձնատուութիւնքը ստանալու իւր անկախութիւնը։ Բայց կարելի չէ տարակուսանքի տակ ձգել Թէ Իտալիայի Թագաւորութեան կազմութիւնը պարտ էր յառաջացնել մի նիւթական փոփոխութիւն Հռոմի պալատի կեցութեան պայմանների մէջ։ Մի Թագաւոր Իտալիայի, պիտի մի իշխան քահանայապետ, կառավարելով միանգամայն կամ Թէ կամենալով կառավարել մի նշանաւոր մասը իտալական հողի, անպատճառ ցուցանուէին մի անհաշտելի հակառակարանութիւն։ Երկու էականապէս միմեանց նախանձաւոր իշխանութիւնների մէջ կարող չէ լինել ոչինչ տևողական խաղաղութիւն։ Իտալիայի Թագաւորը կարող չէ դառնալ գերագոյն մեծաւոր մի ազգային կառավարութեան, քանի որ Պապը սեփականութեամբ աշխարհական իշխանութեան իրաւունք այս կիսակղզու մէջ. պատճառ, արքայական գերամեծարութիւնը պիտի ենթարկուած լինէր մի շարունակ հակառակամարտութեան իւր յատուկ քաղաքային կառավարութեան սահմանների մէջ իսկ։ Մինս կողմից նոյնքան ևս հաւաստի է, որ քանդրութիւնը փոփոխելու միանչափ կամակոր և անշարժելի ամուր սահմանադրութիւն կամ Թէ ստանալ Հռոմի պալատից շնորհմունք, որ հարկաւոր են, կորելու ճանապարհը մի պապիսի կուռ ազգային գերամեծարութեան հետ — հաւաստի է, որ այդ քանդրութիւնը անյուսալի ձեռնակութիւն է։ Ախտու ամենայնիւ, ահա սորանից է կախ, արդեօք կարելի՞ էր, Թէ ոչ, միաւորել Իտալիան մի հատ միապետի գաւազանի տակ։ Արտաքսել Հռոմից Պապը իւր պալատի հետ միասին, այս կը լինէր լուկ և միայն տեղափոխ առնել նորա գործողութեան կենտրոնը։ Թէպէտև սուրբ Հայրը իւր պատապարանի իորքից աւելի փոքր կարողութիւն կ'ունենար կաշկանդելու իտալական կառավարութեան ընթացքը, բայց դժուարութիւնքը, Թող դոքա չլինէին

այնքան բազմաթիւ, այնու ամենայնիւ դորանով յաղթահարուելու չէին։ Իշխան քահանայապետը ոտքի վերայ կը պահէր իւր պահանջողական պաշտօնը, չէր կամելու խոստովանիլ այն իշխանութիւնը որ յաջորդած էր իւր իշխանութեան փոխանակ, և նորա յարակցութիւնքը Իտալիայի թագաւորի հետ պահելու էին միշտ այն արմատացած դաւանութիւնը որ գտանելումէ սեփականութենից զրկուած կալուածատիրոջ և նորա կողոպտողի մէջ։ Մի յայտնի պատերազմ թէպէտ և կարող էր հաստատանել կոտորած, սակայն չէր խոնարհեցնելու կամ կործանելու պապութիւնը, և պատերազմը մի կերպով վերջացած, պիտի սկսանէր մի այլ կերպով։ Ուրեմն, մի տևողական հետեւանք ստանալու, կառավարութիւնը ազատելու մի թշնամի և կարող հոգևոր դասուց, բաւական չէր և ոչ իսկ խոհեմ գործ, նուաստացնել եկեղեցին։ Ամենայն յաղթութիւն որ ստացուելու էր ընդդէմ Հռոմի պալատին, չյաւաջացնելով նորա կողմից մի կատարեալ յօժարութիւն դաշնաւոր լինելու Իտալական կառավարութեան հետ, կը լինէր մի անօգուտ յաղթութիւն։ Այս պատճառով կարևոր է քննել այս տեղ, արդեօք կայ մի հաստատուն պատճառ կարծելու, թէ կաթոլիկեան եկեղեցին պարունակումէ իւր մէջ այնպէս բնաւորուած սերմեր, որ կարող էին պտղաբեր կացուցանել մի պրոպիսի մտաւորական զուգադրութիւն։

Հաստ անձինք կարծումեն, թէ Իտալիայի հոգևոր դասու ապրեցութիւնը յաւիտեանս յաւիտենից կործանուած է, և թէ ազգի իմացական յառաջադիմութիւնքը կրօնական մասին խլումեն այդ ընկերութենից ամենայն յոյս վերստին նորոգելու իւր առաջին գերակշռութիւնը։ Ինչքան մեզ կը հասանի, մեր սիրտը վկայումէ հաստատապէս, որ այս կարծիքը հիմնուած է մի սխալ և շտապ վճռահատութեան վերայ, և դորան համեմատ չէ ճշմարիտ որպիսութիւնը բաների։ Իտալական հասարակութիւնը միւս աշխարհի հետ միասնաբար, ստուգապէս սովորել է մտածել ազատօրէն, և այս ազատութիւնը մտքի, անընդհատ հպատակութեամբ մի հոգևոր դասու հետ, որ ինչ ինչ տեղերում սեփականումէ մի բացարձակ և տանջող իշխանութիւն, և՛ս առաւել սրումէ միայն Իտալական իմացականութիւնը։ Իտալիայի հոգևորական դասը իւր բարձր աստիճանով, պղև ընծայելով իւրեան մի ինքվիզիտորական իշխանութիւն, առհասարակ ատելի է կացուցել իւր անձը բոլոր որչափ և իցէ կրթած ժողովրդականքերի աչքում, եթէ դուրս հանէք դոցա միջից մի փոքրիկ բազմութիւն ջերմեռանդ կուսակիցների, որ պատնումեն նորա մի ինքնապաշտ և յետախտացոյց աղնուապետութեան մէջ։ Ահա այս դաշնաւորութեանը մի կարողութեան հետ, որ նմանումէ աւելի մի նախանձոտ և բռնակալ պօլիցիայի քան թէ մի հոգևոր սպասաւորութեան, պիտոյ է ընծայել մանաւանդ, որ հոգևորական դասը ներկայ րոպէումս կորուսել է ամենայն իշխանութիւն վերակացու լինելու աշխարհի իմացական շարժողութեանը։ Այն դաւն չնգնաբանութիւնը որ իտալական հանճարի ախտա-

բորբոք կենդանութիւնը այնքան անհնայ թափումէ հոգևորների դաստ վե-
րայ, փորր կը պատահի, որ յառաջանար թշնամութեան խորհրդով դէպ ի
կրօնի հաստատութիւնը և արարողութիւնը, որոց վերայ հակող են նոքա։ Ե-
լեմն կը գտանէիր դու Իտալացին յայտնի ազատախոհ, բայց մի Իտալացի, որ
չլիներ կցորդ թագաւորեալ կրօնին, որ լիներ անդամ մի ազատամիտ եկեղեցու,
է մի ստեղծուած որ հաղիւ թէ հասել էր իւր գոյութեան առաջին կերպա-
րանքին։ Պրօտեստանտական կարծիքներ տակաւին օտար են իտալական հո-
գուն և մի ուշադիր զննող վերահասու կը լինի, որ տասից իննն դիպուածների
մէջ ամենաբարեմիտ և ամենաստակոտ հրատարակողը եկեղեցական ան-
կարգութիւնների, թէև նա յարձակվումէր պապի և քահանաների վերայ,
այնու ամենայնիւ ճանչու էր կաթոլիկ ոչ թէ միայն իւր բնական ձգտողու-
թեամբը, այլև հետևելու էր բաւական կանոնաւորապէս իւր աստուածպաշ-
տութեան պատուիրած արարողութիւններին։ Այսպէս, թէպէտ հասարակաց
հոգեւանդութիւնը այս րոպէիս յաղթող է եկեղեցականների ընդդիմութեա-
նը, բայց անկարելի է, որ մի այդպէս բնաւորուած աշխարհի մէջ, հոգևոր
դաստ ազդեցութիւնը երկար ժամանակ անփոյթ արուելով, չխնդրէր իւր
վրէժը։

Մի շատ սխալ կարծիք պիտի լիներ Իտալիայի հոգևոր դաստ որպի-
սութեան մասին, եթէ երևակայէինք մեզ, թէ այդ հոգևորքը էին մի ծոյլ
և դանդաղ, առանձնացած ընկերութիւն, որ երկար ու ձիգ ժամանակներ
ամենևին անզգայ էր մնացել ընդդէմ այն մեծ իմացական շարժողութեան
որին առ փորր փորր հաղորդուել է Իտալական հասարակութիւնը։ Մի ան-
հակառակելի իրողութիւն է, որ Իտալիայի հոգևոր դասը պարունակումէ իւր
կարգերի մէջ անչափ շատ, անարժան և տգէտ անձինք. գորան ապացոյց է
ըստ բաւականին այն ընդհանուր առելութիւնը, որոյ տակ ընկել է նա։ Բայց
միւս կողմից պիտի ասել, թէ շատերը գորա առաւել երևելի անդամներից,
ուշադրութեան արժանի կերպով ընկերացել են ժողովրդական ձգտողու-
թիւններին, ըստ որում համոզուել էին իւրեանց սրտի խորին վկայութեամբ
թէ ազգային շարժողութիւնը չէ հարկաւորապէս անմիաբանելի եկեղեցու
սկզբնական կանոնների հետ։ Այդ հոգևորների մէջ գտանումենք անձինք,
նոյնքան ևս երկիւղած, որքան և քանքարաւոր, որ և ամենայն յօժարու-
թեամբ յանձն են առել թէ հնարաւոր է այս անկեղծ դաշնաւորութիւնը
նոր օրերի քաղաքագործութեան և հռոմէական քահանայապետութեան մէջ,
որ և հաստատել ցանկալի էր նոցա։ Դոցա գրուածքը փորր ի շատէ տոգորած
են նորա ժամանակի գաղափարներով։ Այդ տեղ մեք տեսանումենք եկե-
ղեցին իւր ճշմարիտ կարգաւորութեան, և ոչ այն նեղ ու փակ սահմանի մէջ
որ նորան ընծայումեն մի քանի հոգիներ, — մի եկեղեցի որ ոչ թէ մերժու-
մէր ազատամիտ քրիստոնեայքը, այլ ընդունումէր նորանց բարեացակամ
եղբայրսիրութեամբ։ Կարելի չէ երկբայել, որ, եթէ այդ գրուածների մէջ

հրատարակուած կարծիքները սիրով ընդունուած լինէին Եկեղեցու կողմից, դրա մեծապէս չափաւորած և բարեխառնած կը լինէին այն հակառակամարտութիւնը որ այժմուս կայ Եկեղեցու և իտալական ազգայնութեան մէջ։ Ուրեմն կարևոր է այս մեր ներկայ մեծախորհուրդ րոպէիս վերահասու լինել այդ կարծիքների գործական արժանաւորութեանը և քննել ու կշռել, արդեօք կարո՞ղ էին դրա ձեռնտու լինել այս մեծ խնդրի լուծմանը որ է, թէ ինչպէս պէտք էր վարուիլ Պապի հետ։

Այս շարժողութիւնը սկզբում և իբրև թէ մի գաղտնիք հրատարակուել էր լոկ տեսարանական գրուածների համեստ կերպարանքի տակ. բայց դոցա խորհուրդն էր յառաջացնել մի տևողական տպաւորութիւն բարձր և աղնիւ հոգիների վերայ։ Անկարելի էր որ, երբ վերածնուղիչ ազգեցութեամբք տուած զարկը սկսանում զգալի լինել իտալական հասարակութեան մէջ, դոյն այդ զարկը փոքր ի շատէ չհասնէր եկեղեցական միաբանութեանը։ Երբէք կարող չէ մի ազգի որ և իցէ էական յաժինը բոլորովին փախչել ազգեցութենից մի գաղափարի որ արդէն ստացել է ճշմարիտ գոյութիւն։ Հետևակցաբար, շատ հոգիք երկիւղած, և հոմէական եկեղեցու հետ անկեղծ սիրով կապուած, սաստիկ վշտովուեցան, տեսանելով թէ այս եկեղեցին ոտք է դնում մի թշնամական հիմքի վերայ դէպ ի նոր ժամանակի աշխարհաշինութեան ձգտողութիւնները. մի հիմքի վերայ, որ նորա արտասովումէին, ըստ որում միանգամայն էր նորա բարոյական ազդողութեանը և անմիաբանելի այն պահանջողութեան հետ, որով կամէր նա սեփականել իմացական գերիշխանութիւնը։ Մի մեծ տարաձայնութիւն տեսանվում այն կարծիքների մէջ որ այս ազատ մտածողքը մեր ժամանակի, պաշտպանել են իւրեանց քաղաքական և կրօնական տպարէզի վերջին ընթացքում. բայց սկզբնական աղբիւրի մէջ մի և նոյն զգացողութեամբ կենդանացած էին ամենեքեան, զգացողութեամբ որ ամենևին հակառակ է բոլոր յառաջընթաց րեֆորմատորների զգացողութեանը։ Այս պահպանաէր կրօնաւորքը ունէին մի չափազանց թէև անկեղծ մեծարանք դէպ ի հոմէական Եկեղեցին, որոյ վարդապետութիւնքը համարումէին նորա ազատամիտ կարգերի հետ միաբանելի։ Ըկայ ոչինչ պատճառ կասկածելու նոցա բարեհաւատութեան վերայ, թէև շատերը նոցա միջից վերջապէս դուրս են եկել կրօնական ներողամտութեան սահմանիցից. և այս հեշտ հասկանալի է վառուն բնաւորութեան տէր մարդերի մէջ, որ միւսերի հակառակախոհութեամբ բորբոքուած և հակառակորդներից դրդուած էին։ Այս մարդիկը բարի հաւատով ձգեցին իւրեանց անձը մտաւորական և քաղաքական քննութիւնների լաբիրինթոսը, նոցա սիրտերը վկայումէին հաստատութեամբ, թէ իւրեանց եղրակացութիւնքը ձգտումէին դէպ ի հոմէական կաթոլիկ եկեղեցու յաղթական պարծանքը։ Երբէք մտաբերած չէին յարձակուիլ որ և իցէ վարդապետութեան վերայ և ոչ իսկ նուաստացնել մեծ քահանայական սրբապետու-

Թեան արդիւնաւորութիւնը. նոցա շարժառիթն էր մի չափազանց մեծաբանք դէպ ի պապութիւնը, որ նոքա համարումէին խորհրդական կամարարիւնը այն աստուածպետական սահմանադրութեան որի վերայ քաղցրութեամբ դադարումէր նոցա երևակայութիւնը։

Այս կայր վստահութիւնը դէպ ի հռոմէական եկեղեցին էր մի հատարակաց յատկութիւն բոլոր համաժամանակեայ կաթոլիկեան նորաշինողներ։ Նա պատճառ տուեց այն երկբմտանեայ միաբանութեանը Լամընէի, Լակօրդեռի և Մօնթալամբերի և նոցա միասին հռչակաւոր ուխտադնացութեանը դէպ ի Հռոմ այն խորհրդով, որ նոքա համոզեն պապի միտքը դէպ ի նոր ժամանակի դաղափարները։ Նոյն կայր վստահութիւնը եղաւ նմանապէս Ջիոբերտի և Րոսմինի խոտալացոյ առաջնորդական հիմքը։ Այս երկու մարդկերի պրուաձքն են մանաւանդ, որ կը տան մեզ հարկաւոր նիւթերը, չափելու և կշռելու իմացական շարժողութիւնը այն բանի մէջ որ կարելի է համարել մի աստուածաբանական վիճաբանութեան սահմաններ։

Ջիոբերտին և Րոսմինին լրացուցանումն միևը միւսի թերութիւնքը։ Երկոքեան իսկ քահանայք էին և երկոքեան իսկ պահել են իւրեանց բնաւորութեան մէջ, թէև տեսակ տեսակ կերպով և շատ տարբեր չափով, այն կնիքը որ սեփական է եկեղեցականներին։ Այն ոճի մէջ, որով Ջիոբերտին բացայայտումէ իւր աւելի յառաջախաղաց կարծիքները, կայ մի բան որ յիշեցնումէ սեմենիարոնի աշակերտի ձևը և հոգու դարձուածը։ Ջիոբերտին քրքրելով մետաֆիզիքական պատճառաբանութեան և քաղաքական մտաւայեցութեան աշխարհը, անդիտութեամբ պահել է քահանայ մարդու դարձուածքը և յատկացուցիչ նշանը. այդ տեղ ահա մի օտարոտի կերպով հանդիսանումէ ամենայն բան նորա մտքուց յետոյ հրատարակուած գործի էապէս դաւանաբանական ոճի մէջ. այդ գործը մակագրութեամբ *la Riforma cattolica* գրած է մի ժամանակի մէջ, երբ հեղինակը հրապարակաւ խոստովանումէր շատ ու շատ յառաջախաղաց կարծիքներ, թէպէտ այդ միջոցին ծառայումէր այնպիսի դիտաւորութեան որ ստիպումէր նորան մի րոպէ դարձեալ ոտք դնել աստուածաբանական գաղափարների ճանապարհի վերայ։ Կանոնիկոսները որ ուշադրութեամբ ուսումնասիրել էին այս գիրքը այն խորհրդով որ դատէին նորա ուղղափառութիւնը, կարծիք են հրատարակել թէ որչափ ևս պարսաւելի էին նորա ձգտողութիւնքը, այնու ամենայնիւ անկարելի է, կանոնական օրէնքի հայեացքով պատերազմել ընդդէմ նորա առաջարկութիւններին ինքն ըստ ինքեան։

Նայց Ջիոբերտին, համեմատելով Րոսմինիու հետ, էր մի արտականոն հոգի, որ անտես առնելով ամէնմեծութեան պայմանքը, մի կատարեալ եռանդնոտութեամբ յարձակվումէ վիճաբանութեան սահմանների մէջ, մինչ Րոսմինին սահմանափակումէր իւր պատրաստութիւնը ներս բերելով որոշեալ չափով մետաֆիզիքական նրբամտութիւն մի բնաւորութեան մէջ որ

իւր հեզութեամբ և ցածութեամբ, էականապէս մի քահանայի բնաւորութիւն է, աւետարանի հոգով։ Րոսմինին էր մի ճշմարիտ օրինակ այն առաքինութիւնների որով նշանաւոր էին առաջին դարու քրիստոնեայքը։ Գիտութիւնը չէր յառաջացուցել նորա մէջ ոչինչ հպարտութիւն և նորա կրօնական եռանդը պահում էր միշտ քրիստոնէական սիրոյ և անձնանուիրութեան բնաւորութիւնը։ Մի հարուստ և երևելի ազգատոհմից շառաւիղած լինելով, ընդունեց նա եկեղեցական վիճակը և գործունէայ անդամ էր դրա մէջ, մինչ Ջիոբերտին թողել իւր քահանայագործութիւնը, երբ որ, իբրև մանակից մի բեվոլիւցիոնական միաբանութեան, կասկածանքի տակ ընկնելով տեսաւ իւր անձը Պիեմոնտից տարագրուած։ Րոսմինիու մէջ չկայ ոչինչ հետք այն ազատախոհութեան որ առանց խղճմտութեան հրաժարվում սեղանի սպասաւորութենից։ դորա հակառակ, նորա պարզ և սիրողական բնութիւնը էր բնութիւն մի քահանայի որ սիրով կապուած է իւր սպասաւորութեան սուրբ պաշտօնների հետ։ Այս բնաւորութիւնն էր ահա, որ պատճառ տուեց նորան ցանկանալու մի նոր կրօնական կարգի հաստատութեան, որ պիտի լինէր իւր իդէանների գործական ներքսածութեան առաւել յարմարական միջնորդը։ Հասկանալի է, որ մի այդպիսի մարդու գրուածքը գտած էին հոգևոր գասու մէջ աւելի կուսակիցք, քան թէ Ջիոբերտիու գրուածքը, որ առաւել մանաւորապէս ուղղած էին դէպ ի աշխարհականքը որոց սիրտը մեծապէս գրաւված էր գաւանաբանական ոճից. այլև դոյն այդ գրուածքի ձևը, եթէ ոչ բովանդակութիւնը, զուգակից էր այն կրթութեանը որ ստացած էին առաջին մանկութեան օրերում։ պատճառ, պիտոյ է մտաբերել, որ Իտալիայում դաստիարակութիւնը լցուցանվում գրեթէ լոկ և միայն սեմինարիոններում, ուր բոլոր աշակերտքը — թէև ընծայեն նոքա իւրեանց անձը սուրբ պաշտօնի, կամ ոչ, դաստիարակվում են ըստ եկեղեցական սիստեմայի ուսումնասիրութեան և մտածութեան։ Ջիոբերտիու խօսքի շեշտերը ունէին մի ընտանի և գրաւիչ բան այդպէս դաստիարակուած մարդերի համար. դոքա փաղաքշում էին նոցա ականջները իրև ախորժելի յիշատակներ անցած օրերի։ Այդ տեղից է ահա, որ նորա ազդեցութիւնը ունէր աւելի ժողովրդական բնաւորութիւն քան թէ Րոսմինիու ազդեցութիւնը, որոյ բուն աստուածաբանական գրուածքը ուղղեցուցած էին աւելի մանաւորապէս դէպ ի հոգևոր դասը, *ad clerum*.

Րոսմինիու գործը որ էապէս պարունակում իւր մէջ նորա կրօնական խորհրդածութիւնների ուղղ և ծածը, է այն, որ կրում մակագիրս *Cinque Piaghe della Chiesa* «Հինգ վէրքը եկեղեցու»։ Նորա միւս աշխատասիրութիւնքը, շատ բազմահատոր, են ըստ մեծի մասին մետաֆիզիքական ճառեր, մինչ յիշեալ գործի մէջ նա արձակ համարձակ բացայայտում իւր կարծիքը եկեղեցու կառավարութեան և իւր առ ի սրտէ ճգնողութիւնքը քահանայական դաստիարակութեան մասին։ Այս գործը, գրած լինելով

1832 ին, տասն և չորս տարի ետոյ առանց լոյսընծայութեան։ Ոչ յառաջ, քան թէ պիտս իններորդի ամոռանստուեան միջոցին և այնպիսի պայմանների մէջ, որ ասես թէ գուշակութիւնը վանմափառութիւնը մի քահանայապետի ու ինքնակալ երկիրներու մէջ դարը և տալու նիկոլայոս այն նոր գրքը ու պիտի նոր ընդունէին վերայ առաջորդեր դեպ է ի ապստրիկ, նայնտան և ֆայլան սրտան և ֆառաւոր, այս միջոցիս ահա Րոսմինին թոյլ տուեց հրատարակել իր գործը։ Մի ամենահորին ցաւ և մի շատ ուղղահաւատ կրօնական ակնածութիւն շնչումեն ամեն մի երեսուվայս, ուշադրութեան արժանի, գրուածի մէջ, որ է միանգամայն մի ողբերգութիւն այն անբաղդութիւնների վերայ որ ճնշումեն եկեղեցին, և մի խնդութեան երգ, որ գովաբանութեամբ դոյա վախճանը։ Փոքր ի շատէ ծածկամիտ երևակայութեամբ Րոսմինին խաչի վերայ Քրիստոսի ամեն մի վէրքից շնորհ մի խորհրդաւոր նշանակ մի առանձին նախատինքի որ հասել է եկեղեցուն։ Ապաքանութիւնը, որ կայ պլքի մնակարութեան մէջ, է այդ գործի մի հատ մասը որ կարող էր ունենալ մի թեթև ցուցակութիւն ծածկամտութեան։ Բանախոսութիւնը նորա մէջ պարզ է և ամենայն անհոգոտ յաւելուածից աղատ։ Բայց մի քանի մանրամասնութիւնք տեղեկութիւն կը տան մեզ Րոսմինիոս հայեցուածքի գործական խորհրդի մասին։

Վրուածը նիւէյս հինգ վերէ վերայ բաժանելով հինգ գլուխ. ամեն մինը մակագրած լինելով վէրքից մինի անունով, կամի ցուցանել դորա համեմատ նախատինքը որ հասանում եկեղեցուն։ 1) Վէրքը սուրբ եկեղեցու ձախ ձեռի վերայ, պսակներն բաժանութիւնը ժողովրդի և կլերիկոսների մէջ, հրապարակական աստուածպաշտութեան ժամերում։ 2) Աջ ձեռի վէրքը, պսակներն թերի և անկատար կրթութիւնը հոգևոր դասու։ 3) Վէրքը գոգքի վերայ, պսակներն անմիաբանութիւնը եպիսկոպոսների մէջ։ 4) Աջ ոտի վէրքը, պսակներն եպիսկոպոսների պաշտօնակարգութիւնը որ թողած էր քաղաքական իշխանութեան։ 5) Ձախ ոտի վէրքը, պսակներն եկեղեցական գոյքի անհոգատութիւնը։

1. Յառաջաբանօրէն հրատարակելու յիշեց թէ Աստուծոյ պաշտօնը քրիստոնէական եկեղեցու մէջ, կատարեալ լինելու համար, պահանջումէ ընկերակցութիւնը հոգևորների և աշխարհականների. այլև պէտի մանրամասնաբար խօսէր այն բանի վերայ, թէ ինչ կշիռ ունին այն խորհրդների կարգադրութիւնքը որ նախնի եկեղեցին պատ էր յաւելացնել նոցա վերայ, որ ինքը Քրիստոս սահմանադրել է, Րոսմինին գանգատում թէ չկայ մի կենդանացուցիչ և վերածնող կրթութիւն ներկայ եկեղեցու մէջ։ Սոյն այս բանս ընծայում նա պիտոյ որպէս այն իրող տեսութեանը, որ ժողովուրդը կարող չէ հասկանալ մի վարդապետութիւն, որ մեռած լեզուով խօսում մեր նորա հետ Աստուծոյ պաշտօնի մէջ։

«Եթէ մարմինը, ասում նա, կարող է վերստին ստանալ առողջութիւն, որքան ևս աւելի կարող է եկեղեցին բժշկիլ իր տկարութիւն-

ներից։ Ինձ թվում է, թէ մեր անպատվումներից նորա աստուածներէն հեղինակը, եթէ կարծումենք, որ նա թոյլ էր տալիս լինելու յաւիտենից մի այնպիսի մեծ բաժանում որմ (պատ) ժողովրդի և կլերիկոսների մէջ, որպէս ղէ, ինչ որ կատարվում և ասվում ժամերգութեան և պատգի մէջ, էր ժողովրդի համար մի լոկ կեղծիք։ Նոյնպէս անկարելի է ենթադրել, թէ ընդունելի էր Աստուծուն, որ ժողովուրդը, որին յայտնուել է լոյսը, մանակից լինէր աստուածպաշտութեան ամենասուրբ գործողութիւններին իբրև արձաններ և սիւներ տաճարի մէջ, բոլորովին խուլ դէպ ի այն բառերը որ դարձուցանում դէպ ի նա նորա մայրը, Եկեղեցին, պղտ հանդիսաւոր րոպէներում։ Նմանապէս, որ հոգևորները պատուասիրութեամբ բաժանուելով ժողովրդից, բաղկացնէին մի քահանայական պատրիկոսութիւն, մի առանձին ընկերութիւն, միւս ընկերութենից բաժանուած, ունելով բարիք, լեզու, օրէնք և սովորութիւնք, որ սեփական են էին նոցա միայն։

2. Վերիստոնէութեան ամենալաւ օրերում՝ քարոզութիւնքը և եկեղեցական արարողութիւնքը, որոց մէջ գործ էր ածվում՝ մի կենդանի լեզու, էին, ասում Թոմինին, մի պատուական դպրոց քրիստոնէական ժողովների համար, և գործումէին մի ազդեցութիւն որ յառաջացնում էր ընտիր քահանայք և ընտիր եպիսկոպոսք։ Բայց մեր օրերում՝, երբ այս կրթութիւնը կորուսել է իւր նպատին կշիռը, հոգևոր դասը հաւասարուել է նոյնպէս տգէտ և անուշադիր աշխարհականի հետ։ Ա՛յն առաջին ժամանակներում, եպիսկոպոսի պաշտօնը էր ճշմարիտ ուխտաւորին ուղղութեան և փրկութեան ճանապարհը ցուցանել։ Այս սրտակից հաղորդութիւնը վերացաւ, երբ որ նշանակութիւնքս քարչ և պոռին կարգի հոգևորք սովորական դարձան։ Այնուհետև եպիսկոպոսքը յետ քարշուելով մի աւելի առանձնական շրջանի մէջ, յանձնեցին դաստիարակութեան գործը մի կարգի մարդերի որ աւելի փոքր կրթեալ էին և չքաւոր կերպով վարձատրուած։ Այդ էր ահա անփախչելի հետևանքը մի պակասաւոր կարգի ու կանոնի որ դարձան կրկնապատիկ դատապարտելի այս մարդերի սառնասրտութեամբ և այն ցաւելի անզօրութեամբ սուրբ գրքից արած քաղուածների, օրական գործածութեան համար։

3. Թոմինին եկեղեցու երրորդ մեծ վէրքը տեսանում եպիսկոպոսների անմիաբանութեան մէջ։ Նախնի ժամանակներում՝ անընդհատ հաղորդութիւնք, մի գործունեայ նամակակցութիւն, յաճախ սիւնհոդոսական ժողովներ և այլ նմանապիսի ճանապարհներ պահպանում էին մի մեծաւոր կապ եպիսկոպոսների մէջ։ Այս միութեան կապը դադարեցաւ, երբ որ եպիսկոպոսները կոչուած լինելով պաշտպանել իւրեանց իրաւունքը աշխարհական իշխանութեան, ստիպուած էին նոքա մտանել քաղաքական խնդիրների լաբիրինթոսի մէջ։ Թոմինին կարծում է, թէ այս պայմանը մտել է նախախնամութեան խորհուրդների մէջ որպէս հնար ազդելու քրիստոնէութեան

հոգին մի բարբարոս հասարակութեան մէջ։ Բայց նորա կարծիքով, այս խորհուրդը լցուեցաւ ճեղքուէն ընդհատուածներէն ետև, երկվեցաւ մարքիոնի ժողովէն որ պէտք է ուսումնասիրենք, ևն հարուստ բնութեամբ անոտար և ահմանափակ. և որ, այս ընդհատուածներէն գնալէն է եպիսկոպոսներէն անփոքանութիւնը։

Այս երևութական հակառակաբանութիւնը հնարների անկատարութեան և արարչի կատարելութեան մէջ, մեկնելու համար, յաւելացնում է Թոմինին թէ. «Եկեղեցին մանակից է աստուածային բնութեանը և մարդկեղէն բնութեանը. աստուածային է նորա յաւիտենական խորհուրդը. աստուածային է այն միջնորդը որով այդ խորհուրդը լցուեցաւ, այսինքն, փրկիչը Քրիստոս. աստուածային է վերջապէս այն խոստումը, որ այս միջնորդը, ինչպէս լսուը ճանաչելու ճշմարտութիւնը և շնորհը լցուցանելու սրբութիւնը, երբէք ստելու չէ նորան։ Բայց բոլոր միւս վերաբերութեամբք, գործերը որ պէտք է ածուի Նախախնամութիւնը իւր խորհուրդները լցուցանելու համար, մարդկեղէն են. պատճառ, եկեղեցին է միայն մի ընկերութիւն մահկանացուների որ, քանի նոքա այս երկրումն են, ենթարկուած են մարդկային բնութեան թշուառութիւններին և անկատարութիւններին»։ Սորանով մեկնում նա, թէ ինչու Նախախնամութիւնը թոյլ է տուել եկեղեցու մէջ պայմաններ, որ խախտել են եղբայրական միութիւնը եպիսկոպոսների, որովհետև նոքա ձգտում էին հոգեղենացնել ընկերութիւնը. «Բայց, յաւելացնում նա, այս ապիրատ կռիւը կաթոլիկեան կլերիկոսների լցուած է. ընկերութեան վերածնելութեան համար որոշած ժամանակը վերջացել է տասն և վեցերորդ դարու հետ». պատճառ, եպիսկոպոսները իւրեանց աշխարհական կալուածների օգուտներից ստիպուած ձգել էին իւրեանց անձը մրրկայոյզ քաղաքական բաժինների և խառնակութիւնների մէջ, որ և յառաջացուցել են մի կատարեալ թշնամութիւն նոցա մէջ։ «Իշխանութիւնը և հարստութիւնքը իւրեանց ընութորութեամբ են վէճերի և կռիւների աղբիւրք. մի ստոյգ իրողութիւն եկեղեցական պատմութեան մէջ, այն է, որ ամենայն տեղ, ուր աշխարհական իշխանութիւնը միաւորուած է եկեղեցական իշխանութեան հետ, անյապաղ դուրս են երևում երկպառակութեան պատճառքը»։

Իբրև հաստատութիւն այս առաջարկութեան, Թոմինին յիշեցնում եկեղեցու պատերազմները Կոստանտնուպօլսի մէջ, գերագոյն հոգևոր իշխանութեան մասին, պատերազմներ որ վերջացան յառաջացնելով յունական հերձուածը, բաւեննայի եպիսկոպոսների չկամելութիւնը, Իտալիայի եբգարիտաի միջոցում, ստորադրելու իւրեանց անձը Հռոմի աթոռի գերագոյն իշխանութեանը, այլև այն հանգամանքը որ ընթացակից եղան մեծ արևմտեան հերձուածին։ Ողջոյն հետևանքը այս անցքերի այն եղաւ, որ եկեղեցին ստիպուեցաւ ստորադրել իւր անձը ազգային կարպապրութիւնների, որ հակառակ են նորա էութեանը։ «Բացարձակ հարկաւոր է, ձայն է տա-

լիս Թոմինին, վերջ դնել մի ապպային եկեղեցու»։ Ապա, եպիսկոպոսական արժանաւորութիւնը իւր վատահեղութեամբ գործել է պրուիչ նիւթ աշխարհասէր հոգիների համար, մինչ, երբ որ նա շատ մօտ կացած էր աղքատութեան հետ, երկիւղած հոգիը միայն պատճառ ունէին որոնելու նորա պատուականութիւնը։ Վերջապէս, եկեղեցին ընդարձակելով իւր կառուցքը, ձգել է իւր անձը ոչ թէ միայն փոխոխ պատահարների տակ, այլև թշնամական դպացողութիւնների, որ ունի ժողովուրդը առ հասարակ դէպ ի կաթուածատեր աղնուապետութիւնը։

4. Այս կացութիւնս հոգիորների յառաջացել է քաղաքային իշխանութեան յարիշտակոզարար նեղբսանութիւնը եպիսկոպոսների վիճակատուութեան մէջ և դորա հետ միասին ծառայագործութիւնը եկեղեցու. պատճառ, մի ազատ հասարակութիւն պիտի ունենայ իր ուժնը ընտրելու իւր յատուկ մեծաւորը։ Այս բանը լինում էր քրիստոնէութեան գաղափարական ժամանակներում, այն միջոցներում, երբ եկեղեցու կառավարութիւնը չէր մի երկաթէ էխանութիւն, այլ մի սուրբ և հոգևոր ազատասորութիւն։ Ուրեմն, Թոմինիու դրուածի հիման վերայ, բոլոր ժողովը հաւատացեալների գործով մասնակից էր բոլոր ընտրութիւններին և բոլոր որոշմանց։

«Ընտրութիւնը էրբ դատաւոր և խղճմտութիւնը էրբ խորհրդակից, ահա այսպէս էր պատուական կանոնը որ կառավարում եկեղեցու բոլոր գործողութիւնքը, մանաւանդ թէ եպիսկոպոսների ընտրութեան մասին։ Արդարև, եթէ խօսքը եղած լինէր մի լոկ օրէնադրական հնդրի վերայ, քրիստոնէական ժողովուրդը կարողացած լինելու չէր մասնակցել եպիսկոպոսների վիճակատուութեանը. բայց որովհետև քրիստոնէական սէրը և իմաստութիւնը նախաթոռ էին բազմեցած օրէնքի գործադրութեան հանդէսի մէջ, այս պատճառով առաջնորդները ոչինչ բան ինքնագլուխ վճռում չէին և ոչ իսկ ծածկաբար իրենց մէջ։ Շատ բնական էր, որ նոքա, որ կամէին իւրեանց հոգիքը յանձնել մի հովուի խնամարկութեան, պիտի գիտենային թէ ո՛րպիսի մարդ էր դա. ահա թէ ինչ պատճառով ժողովրդի կամքը որոշումէր ընտրելի եպիսկոպոսքը և քահանայքը»։

«Երբ որ եպիսկոպոսը և քահանան սկսան մոռանալ իւրեանց պարտականութիւնքը և այնու հետև կրումէին միայն հովուական անունը, էին այլ ևս հաւատացեալների խորհրդապահք, բարեկամք և հայրեր. երբ կլերիկոսքը լցուցանելով միայն աստուածպաշտութեան լոկ ձևերը և արտաքին արարողութիւնքը, այսպէս ասենք, նմանակից դարձան հեթանոսութեան հին քուրմերին» այնու հետև ժողովուրդը դառնալով սառնասիրտ դէպ ի եկեղեցու բարին, թոյլ տուեց, որ եկեղեցական արտօնութիւնքը կամաց կամաց փոխանցէին աշխարհական իշխանների ձեռք, որոց ամենեին շահաւէտ էր իւրեանց սանձի տակ պահել մի հասարակութիւն որ այնքան հարուստ էր պարգևական կալուածներով։ Այսպէս ահա, կլերիկոսքը, իւրեանց ան-

ձնական օգտաների մէջ կաշկանդուած, ուրիմն և հարկաւորապէս իւրեանց ուշադրութիւնը բաց դարձուցանելով հոգևոր բաներից, անձնատուր եղան իշխանների հաճոյքին։

«Պատճառ, կարելի չէր, որ նոքա դառնալով Խոյաստէ Հռդէի, մնային ծէրին մեալ Առաքոյ Հռդէի»։

Ահա թէ ինչպէս յառաջացաւ մի յեղափոխութիւն, որ կերպարանափոխ արաց եկեղեցու սահմանագրութիւնը և բոլորովին աշխարհական շինեց նորան, ոչ թէ միայն նորա յարակցութիւնների մէջ դէպ ի իշխանքը, այլև նորա յարակցութիւնների մէջ դէպ ի ինքը յատկապէս. պատճառ, նոյն աշխարհական հոգին պատճառ տուեց Հռոմի պալատին, այս իշխանական արտօնութիւնների ըօրութեամբ սեփականել այն «յետոյ գործադրելի» իրաւունքը նորանից կախ եպիսկոպոսական թեմերի վերայ [1]). մի իրաւունք որ արտաւոմ Բոսմինին իրրև պատճառ իրաւացի ստգտանքի։ Միւս կողմից տալը աթոռը ընդունելով աշխարհական իշխանութեան կարգը, սահպուհ եցաւ, խոհեմութեան շարժառիթներով, իշխանների հետ դաշնաւորութիւնք հաստատել, թէպէտ դոցա պայմանքը վնասակար էին եկեղեցուն. այսպէս ահա, շատ դիպուածներում նա թողեց նոցա իշխանութիւնը կարգելու եպիսկոպոսները. մի թոյլտուութիւն որ Բոսմինին համարում եկեղեցու սուաւել մեծարելի կանոնների դրժողութիւն։ Դորանից յառաջացան կրերիկոսներ որ կորցրեցին իւրեանց բարոյական կացութիւնը, առանց ստանալու որ և իցէ քաղաքական ազդողութիւն որ լինէր օրէնք և իցէ օգտակար իշխաններին, անկարգութիւնքը ճնշելու համար։ «Պատճառ, ինչպէս կարող էր ժողովուրդը ուշադրութիւն ցուցանել այնպիսի եպիսկոպոսների խօսքին, որոց մէջ տեսանում էր նա լոկ պաշտօնակալք տէրութեան»։ Ահա, որպէս հետևանք եկեղեցու այսպիսի թշուառ որպիսութեան, աշխարհը, Բոսմինեան ասելով, մեծ քայլափոխներով յառաջ է դիմում դէպ ի մի հեղաշուած, և ոչինչ բան, նորա կարծիքով, կարող չէ դադարեցնել այդ ընթացքը, եթէ ոչ մի բոլորովին և անմիջական ազատութիւն եկեղեցու, որ արձակուած էր ամենայն ընկերակցութիւններից տէրութեան հետ։

«Մի հերձուած օրէ օր դառնում է անելի անհրաժարելի, և ինչ բան կարող էր վերկել եկեղեցին։ Բաւական էր մի հայեացք ձգել երկրի վերայ և պատասխանը գտած է։ Նախանձամութեան ահաւոր դատաւճիռը այլ ևս ծածկած չէ երկրագութեան խաւարի մէջ. նա հնչել է արդէն Եւրոպայի

---

[1]) Դա ասելում պատմութեան մէջ Reservatum ecclesiasticum, այսինքն մեծ եկեղեցական իրաւունք որ 1555 թուականին եղած կրօնական հաշտութեան դաշնով սեփականուեցաւ կաթոլիկներին. որոյ ըօրութեամբ, եթէ մի կաթոլիկ եպիսկոպոս, աթոռ ընդունէր կամ այլ հոգևոր անձը ընդունուէր պրօտեստանտական հաւատս, դա իսկոյն զրկվուէր իւր պաշտօնից, եկամուտքից և վիճակից, և կաթոլիկական մեծաւորներին համարձակ էր դրան յաջորդ կարգել մի կաթոլիկ հոգևոր։

և տիեզերքի շատ մասներում՝ Անգլիան, Իրլանդիան, Միաբանուած տէրութիւնքը (Ամերիկայի) և Բելգիան ունին ազատութիւն ընտրելու իւրեանց եպիսկոպոսքը. բայց երբէք հաւանելու չէ նախախնամութիւնը հրաժարուիլ վերստին ստանալ եկեղեցու համար այս ազատութիւնը երկրի բոլոր ազգերի մէջ. Թո՛ղ այս մասին միապետները լաւ հաւատացած կենան. ժողովուրդը, այո՛ ժողովուրդն է այն գաւազանը, որ գործ կը դնէ նախախնամութիւնը։ Ազատարձակութիւնը դատապարտելի է, և ոչ առաւել դատապարտելի գորան, քան թէ եկեղեցին։ Բայց ինչ որ ոչ եկեղեցին և ոչ իմաստունները արել չեն, կ'իրագործէ Յիսուսի Քրիստոսի կարողութիւնը. Յիսուսի Քրիստոսի, որ թագաւոր է թագաւորների և ազգերի, որ ամենայն բան խոնարհեցնում իւր կամքին, որ փոխում չարը դէպ ի բարին, որ և գործ կը դնէ նոյնպէս չարագործի բազուկը իւր խորհուրդները լցուցանելու համար։ Ես համարձակվում ասել, թէ Եւրոպայի հերձուածը անփախչելի է. պատճառ, մի միայն հնար կայ փարատելու գորան. այսինքն յետ տալով Աստուծոյ եկեղեցուն մի կատարեալ ազատութիւն»։

Ե. Եկեղեցական կալուածների կալելութիւնը էր անփախչելի հետեւանք նոցա կախողութեան պարզևատու իշխաններից։ Այդպէս, եկեղեցին քաղաքային պարտականութիւնների պայմաններ չանձն առաւ նոյն միջոցին, երբ նա մոռանում էր այս ազատ և կամաւոր հասոյթը որ Բոսմինին համարում իւրաքանչիւր քրիստոնէական հիմնարկութեան սեփական։ Որպէս հաստատութիւն այս առաջարկութեան նա վկայութիւն է բերում այն իրողութիւնը թէ Յիսուս Քրիստոսը ոչինչ տեղ հրամայել չէ պահել ղևտական կարգերը տասանորդի մասին։ Ուրեմն պարզևական կալուածների և դոցա հետ կից ծառայութեան հարկի ներքաշուելութիւնը եկեղեցու մէջ, Բոսմինիոս ասելով, է գլխաւոր աղբիւրը նորա բոլոր թշուառութիւնների։

«Ես եզրափակում՝ ասում նա վերջացնելով, որ ամենայն բանադատութիւն վերջաւորվում ապացուցանելով թէ, երբ որ Պասքալիս երկրորդը [1]) այնքան աղնուամտութեամբ առաջարկեց հրաժարուիլ այս բոլոր պարգևական կալուածներից, այս մեծ մարդը դորանով դնում էր կացինը ցաւի նոյն իսկ արմատի վերայ. բայց նորա դարը չէր այնքան հասունացած, որ կարողանար տանել մի այդպիսի բժշկական դեղը»։

Հարկաւոր չէ ապացուցանել Բոսմինիոս հայեացքի անչափելի հետեւութիւնը. Եթէ նոքա ընդունուած լինէին հռոմէական կաթոլիկ եկեղեցու կողմից, դոցա հետեւանքը լինելու չէր աւելի փոքր, քան թէ նորա կատարեալ յեղափոխութիւնը. նոքա տալու էին նորա գործողութիւններին մի բոլորովին այլ ուղղութիւն, քան թէ որ ուղղութեանը հետեւել էր նա դարաւոր ժամանակներով, և նորան իրրև մի առանձին միաբանութիւն,

[1]) Պասքալիս երկրորդը կառավարել է պապական աթոռը 1099 — 1118 թ.

ամենևին բաժանելու էին որ և իցէ աշխարհական ձգտողութիւնից։ Առաջարկութիւնքը որ ջատագովում էք Բոսմինին, անմիաբանելի են որ և իցէ քաղաքային իշխանութեան և որ և իցէ աշխարհական կարգադրութեան հետ որ յառաջանում էին եկեղեցու կողմից։ Մի առանձին յատկացուցիչ նշանաւորութեան, ուղղահաւատ կաթոլիկեան քահանային սեփական, այն է, որ Բոսմինին թէպէտ մանրամասնաբար և երկար խօսում էք բոլոր միւս խնդիրների վերայ, սակայն հրաժարվում էք յայտնել իւր կարծիքը յատկապէս, Պապի աշխարհական իշխանութեան մեծախորհուրդ խնդրի վերայ, մի խնդրի որ անընդհմանալի կերպով հետևում էք նորա յատուկ փաստերից։ Այո՛, միանգամ մեղմով հասկացնում էք նա փակագծի ձևով, թէ նա պարզևական կալուածներին, որ սաստիկ դատապարտվում էին նորա բերանով, դասակից չէ առնում սուրբ աթոռի իշխանութեան սահմանքը, որովհետև սրբա լինելով ազատ, չէն ստորադիր այն քաղաքային և տէրունի հարկերին որ նա համարում նոյնքան իսկ պայմաններ, եկեղեցական արժանաւորութեանը վնասակար։ Բայց գործական հետևութիւնքը մի այդպիսի սահմանափակութեան, որ նա առնում էք հարևանցի, լոլորովին քանդվում էն այն թշնամական և հակառակ իդէաների շղթայակցութեամբ, որ նա այնքան ազատօրէն դուրս է թողում իւր գրուածի ընթացքի մէջ։ Ոչ մի հոգի, որ կցուած էր Բոսմինիու սկզբնական կանոններին, կարող չէ մի խորին հշիւ տալ պապի աշխարհական իշխանութեանը, ուր մնաց լինել նորա սիրող և համախոհ։ Կարելի է, որ մի մարդ չտայ նորա իդէաներին իւրեանց բնական եզրակացութիւնը, բայց Բոսմինիու իդէայքը ինքն ըստ ինքեան այնքան էապէս հակառակ են որ և իցէ աշխարհական օգտի, որ եթէ միանգամ տարածվէին և յօժարութեամբ ընդունվէին, նոքա անպատճառ պիտի հարկադրին բանականութիւնը գործել մի եզրակացութիւն, որ ձգտումէր ցած գլորել Պապին իւր աշխարհական իշխանութեան աթոռից։ Այսպէս ահա, այդ իդէաների ձգտողութեան վտանգը պարզ ու պայծառ հասկացան նոքա, որոց օգուտը պահանջումէր պահպանել բաների հին կարգը, որ և յանձն էին առնել ամենայն, իւրեանց ձեռքում եղած հնար գործ դնել պահպանելու նորան։

Ս. Նազբէանց։

(Շարունակութիւնը միւս տետրակում։)

ԲԱՐՈՅԱԿԱՆՔ·

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ·

Ճշմարտութիւնը, այս երկնային լոյսը, է մի հատ բանը աշխարհիս վերայ, որ արժանի էր մարդու մեծարութեանը և հետաքրքրութեանը: Նա միայն, է մեր հոգու լոյսը, մեր սրտի առաջնորդը, ճշմարիտ հաճութիւնների աղբիւրը, մեր յոյսերի հիմքը, մեր հոգածութիւնների մխիթարութիւնը, մեր ցաւերի մեղմիչ սպեղանին, մեր բոլոր վշտերի բժշկական դեղը. նա միայն է աղբիւրը բարի խղճմտանքի, ահ ու սարսափը չարի, ծածուկ պատիժը արատի, ներքին վարձատրութիւնը առաքինութեան. նա միայն անմահացնում է նորանց որ սիրել են նորան, փառաւորում շրթպսակապրը նոցա, որ չարչարվում են նորա համար, հասարակաց օգտի անուանքը քարշում տանում դէպ ի նշխարքը նորա մարտիրոսների և պաշտպանողների և պատասխանի է կացուցանում անարդանքը և ագքատութիւնը նոցա, որ աննման բանից հրաժարուել են, վասն հետևելու նորան. վերջապէս նա է միայն, որ ապրումէ վհհանձն մնածութիւնք, շինում քաջաշնական հոգիք, հոգիք, որոց արժանի չէ աշխարհը, խնամատուներ որ միայն արժանի են այս անուանը: Որպէս մեր բոլոր քանքարները պիտի գործ դնենք, յայտնի կացուցանելու ճշմարտութիւնը, մեր բոլոր եռանդը, պաշտպանելու նորան. ուրեմն մեզ պարտ էր միայն որոնել մարդերի մէջ ճշմարտութիւնը և թոյլ տալ միայն, որ նորա հաճելի լինէին մեզ ճշմարտութեամբ. մի խօսքով, ես կարծումեմ, որ նա իւր անձը սիրելի կացուցանելու մեզ, բաւական էր որ դուրս երևէր մեր առաջև և ցոյց տար մեր անձը մեզ ինքնելիս, ուսուցանելով մեզ ճանաչել մեր անձը:

Ս· Նալբեանց·

1. Հիւսիսափայլ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու է իր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մանաւանդ Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ:

2. Բնագիտական ճառեր, այսինքն բնութեան օրէնքների և դոյա գործադրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր գանազան փիզիքական յայտնագործութեանների, հասարակաւոր Աստղաբաշխութեան, Քիմիայի, Հանքաբանութեան և Ֆիզիօլօգիայի վերայ. այլև բանախօսութիւն տունկերի, գիտութեան արժանի բոյսերի, նոցա անկարկուտեան և օգտի վերայ, վերջապէս կենցաղօգուտ գիւտերի և յայտնագործութեանների մասին:

3. Խարոյական, գեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և զգացողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով. թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութենից. այլև Կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ:

Ցանկացողքը առնուլ այս օրագիրը կարող են հասուցանել իւրեանց խնդիրը կամ ուղղակի Հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս. Въ Редакцію Армянскаго Журнала «*Съверное Сіяніе*», въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца. կամ թէ Մոսկվայի Նամակատանը այսպիսի հասցէով. Въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Տարեկան 12 աւետարանների գինը է 8 մանէթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքների համար $9\frac{1}{2}$ մանէթ:

Одобрено Цензурою въ С.-Петербургѣ, 30 Іюля 1862 года.